AZG NEW 1.QXD 6/1/2009 10:38 PM Page 1

Ազգ
Azg
2 ՅՈՒՆԻՍ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 100 (4236)
ISSN: 1829-1651

# Նախարարը չի հաստատում երկու զինծառայողների՝ ադրբեջանական կողմ անցնելու մասին տեղեկատվությունը

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը չի հաստատում ադրբեջանական լրատվամիջոցների այն տեղեկատվությունը, թե Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի երկու զինծառայողներ անցել են ադրբեջանական կողմ: Անդրադառնալով Ադրբեջանում գտնվող հայ զինվորների թվի վերաբերյալ հարցին՝ Ս. Օհանյանն ասաց, որ, ըստ իրենց տեղեկությունների, ադրբեջանական կողմում վերջին ժամանակահատվածում կան երեք հայ զինծառայողներ, որոնց վերադարձման համար համապատասխան աշխատանք է իրականացվում Կարմիր խաչի միջազգային կենտրոնի, ԵԱՀԿ գրասենյակի, նաեւ տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, որպեսզի նրանց միջոցով ադրբեջանական զինված ուժերի համապատասխան կենտրոնների հետ կապ պաշտպանվի:

# Արեւելյան ընտրախորամանկության ողջ փայլը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Երեւանի ավագանու ընտրությունների նախնական արդյունքներով Երեւանի ավագանու ցանկալի աթոռին հասան միայն երեք կուսակցություն՝ ՀՀԿ-ն ԲՀԿ-ն, եւ ՀԱԿ-ը: Ընդ որում՝ ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը միասին համարյա նույնքան տոկոս ունեն, որքան ՀՀԿ-ն միայնակ: Այսպիսով՝ իրականություն դարձավ ՀՀԿ-ի բյուրեղյա երազանքը՝ հավաքել 40 տոկոսից ավելի, որի դեպքում օրենքն այդ ուժին պարգեւատրում է բոնուսային համակարգով՝ ձայների 40+1 տոկոս քվե ստացող կուսակցությունը կարող է ստանալ լրացուցիչ մինչեւ 10 տոկոս որպես բոնուս, այդ կերպ դառնալով հաղթող մեծամասնություն եւ հնարավորություն ստանալով միանձնյա առաջադրելու սեփական թեկնածուին: Սակայն, ամենայն հավանականությամբ, բոնուս չի տրվելու, ՀՀԿ-ն կստանա ձայների 53- 54 տոկոսը (դուրս մնացած ուժերի ձայները կբաշխվեն անցած կուսակցությունների միջեւ), եւ եթե նախնական տվյալները մնան նույնը, ՀՀԿ-ն կստանա 35 մանդատ, ՀՀԿ ցուցակի առաջին դեմքն ավտոմատ կդառնա քաղաքապետ, ԲՀԿ-ն՝ 17, ՀԱԿ-ը՝ 13 մանդատ, եթե վերջինս այլ որոշում չկայացնի: Երեւանի քաղաքապետն ավագանու առաջին նիստում կներկայացնի 4 փոխքաղաքապետների, որոնց ընտրելու է ավագանին: Մնում է, որ ՀԱԿ-ը որոշի իր անելիքը:

Քաղաքի կառավարման ղեկից հեռու մնացին խորհրդարանական ուժերից եւս երկուսը՝ կոալիցիոն ՕԵԿ-ն ու արտակոալիցիոն Դաշնակցությունը, որոնք չհաղթահարեցին նվազագույն 7 տոկոսանոց արգելանքը: Չի խանգարի հիշեցնել ընտրությունների նախնական արդյունքները տոկոսային տեսքով. ՀՀԿ-47, 39, ԲՀԿ-22,71, ՀԱԿ-17, 41, ՕԵԿ-5,22, ՀՅԴ-4,65, ԺԿ-2,12, տոկոս, իսկ ՀԱՍԿ-ը ստացել է 1 տոկոսից պակաս:

Տես էջ 2

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում նախատեսվում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը

*Ամերիկացի համանախագահ Բրայզան այն լավատեսությունը չունի, ինչ ուներ Պրահայի հանդիպման առնչությամբ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Մայիսի 7-ին, երբ Պրահայում հանդիպել էին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան շտապել էր հավաստիացնել, որ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը եղել է կառուցողական, նրանք սկզբունքային խնդիրներում նվազեցրել են տարաձայնությունները եւ համաձայնության են եկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջը: Բրայզային հաստատել էին Բեռնար Ֆասիեն եւ Յուրի Մերզլյակովը, ստեղծելու համար այն տպավորությունը, թե կարգավորումը մոտ է, ընթացիկ տարում կողմերն այդ ուղղությամբ լուրջ առաջխաղացում կարձանագրեն՝ նոր ձեռքբերումներով:**

**Իրականում Չեխիայի մայրաքաղաքում հրավիրված հանդիպման գլխավոր արդյունքը կողմերի հաջորդ անգամ Սանկտ Պետերբուրգում հանդիպելու որոշումն էր: Բրայզան, ինչ խոսք, չէր կարող չիմանալ այդ մասին: Այդ դեպքում ինչո՞վ է պայմանավորված նրա չարդարացված լավատեսությունը: Ըստ երեւույթին, լավատեսության համար Բրայզային հիմք էր տվել այն, որ Սարգսյան Ալիեւ հանդիպումը կազմակերպվել է Պրահայում ԱՄՆ-ի դեսպանի կեցավայրում, իսկ լավատեսությունը պայմանավորվում էին Հարավային Կովկասում հարավօսական պատերազմի հետեւանքով ԱՄՆ-ի կորցրած դիրքերը վերականգնելու, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Մայնդորֆյան հռչակագրով ամրագրված նախաձեռնությունը չեզոքացնելու Վաշինգտոնի հաշվարկներով:**

Տես էջ 3

# Հանրային խորհրդի նախագահ է նշանակվել Վազգեն Մանուկյանը

**Նախագահի նստավայրից հաղորդում են, որ Սերժ Սարգսյանը կարգադրություն է ստորագրել Հանրային խորհրդի անդամների կազմը հաստատելու մասին:**

**Հաստատվել է հետեւյալ կազմը՝ Ռոբերտ Աթոյան, Ստեփան Գիշյան, Կարինե Դանիելյան, Հովհաննես Թադեւոսյան, Բաբկեն Հարությունյան, Հենրիկ Հովհաննիսյան, Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյան, Արա Մինասյան, Հովիկ Մուսայելյան, Հայկ Սարգսյան, Սոս Սարգսյան, Արմեն Տեր-Տաճատյան: Նախագահը կարգադրություն է ստորագրել Վազգեն Մանուկյանին Հանրային խորհրդի նախագահ նշանակելու մասին:**



# ՀՅԴ-ն պատճառը փնտրում է իր աշխատանքի մեջ

**ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմինը հայտարարություն է տարածել, որում մասնավորապես ասված է. «Ավագանու ընտրությունները մենք դիտարկում էինք իբրեւ քաղաքական համակարգի կայացման, մայրաքաղաքի կառավարման նոր մոդելի ձեւավորման, նախագահական ընտրություններից հետո ստեղծված առճակատման ու թշնամանքի մթնոլորտի հաղթահարման, հասարակության համախմբման հնարավորություն: Ցավոք, այդպես չեղավ: Դարձյալ ընտրություններում դերակատար եղան թաղային եւ օլիգարխիկ հեղինակությունները, ընտրակաշառքը, վարչական լծակների օգտագործումը»: Անկախ այն հանգամանքից, թե որքանով է ավագանին ձեւավորող քաղաքական ուժերի համամասնությունը համապատասխանում մայրաքաղաքում նրանց ունեցած իրական վարկանիշին, համայնքային այս ընտրությունների արդյունքում ՀՅ Դաշնակցության արձանագրած արդյունքի պատճառները մենք հակված ենք փնտրելու միայն մեր աշխատանքի մեջ: Միեւնույն ժամանակ արձանագրում ենք, որ ընտրությունները չընթացան գաղափարական ծրագրային հիմքի վրա, եւ այս առումով ՀՅԴ-ի եւ նրա քաղաքապետի թեկնածու Արծվիկ Մինասյանի ջանքերը ըստ արժանվույն չարդյունավորվեցին: Ցավոք, մեր քաղաքացիները շարունակում են հիմնականում քվեարկել՝ տուրք տալով իշխանությունների վարչական ճնշամիջոցներին, ընտրակաշառքներին եւ ամբոխավարությանը: Առանց մասնանշելու կոնկրետ ընտրախախտումները՝ ԿԸՀ-ում ՀՅԴ ներկայացուցիչը, որպես շարունակական արտասովոր այս երեւույթների նկատմամբ քաղաքական անհամաձայնության արտահայտություն, չի ստորագրելու այս ընտրությունների եզրափակիչ արձանագրությունը:**

# Օմբուդսմենը մերժում է ՀԱԿ-ի եւ «Ժառանգության» մեղադրանքները

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը տարածել է հաղորդագրություն, որում ասվում է, որ «Արմեն Հարությունյանը կտրականապես մերժում է Հայ ազգային կոնգրեսի եւ «Ժառանգություն» կուսակցության համատեղ հայտարարության մեջ հնչած մեղադրանքները եւ թույլ չի տա քաղաքական ուժերին իրենց մեղքը բարդել ՄԻՊ-ի վրա»: Ըստ պաշտպանի, ե՛ւ իշխանությունը, ե՛ւ ընդդիմությունը փաստահավաք խումբը օգտագործեցին քաղաքական շահարկումների նպատակով եւ թույլ չտվեցին, որ գործի որպես փորձագետների խումբ: Տպավորություն է ստեղծվում, որ ընդդիմության եւ կոալիցիայի ներկայացուցիչները խմբում գործում էին համագործակցած: Աշխատելու ցանկության դեպքում ընդդիմությունը կարող էր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին զուտ կեցվածք ընդունելու կոչ անել եւ ի գիտություն ընդունել ՄԻՊ-ի՝ նոր ներկայացուցիչ առաջադրելու պատրաստակամությունը: Բացի այդ, եթե ընդդիմությունը շահագրգռված էր փաստահավաք խմբի արդյունավետ աշխատանքով, այդ դեպքում ինչո՞ւ հիմնական լարվածություն ստեղծողը, անձնական վիրավորանքներ հասցնողը հենց Անդրանիկ Քոչարյանն էր: Վերը նշվածը ապացուցում է, որ Վահե Ստեփանյանի՝ խմբից դուրս գալու որոշումն արդարացված էր: Սակայն պաշտպանը չի հրաժարվում նոր թեկնածու առաջադրելուց, միայն թե այս դեպքում նա լինելու է ոչ թե փորձագետ, այլ՝ խմբում ձեւավորված մթնոլորտին ավելի համապատասխանող անձ: Մի հոգին չի կարող շախմատ խաղալ, եթե մյուս չորսը հրահանգված են ռեգբի խաղալ, եզրահանգում է Արմեն Հարությունյանը:

# Չախալյանին դատապարտելուց հետո էլ նրա հետ «կռիվ» են տալիս

**Ջավախահայ քաղաքական ակտիվիստ, «Միասնական Ջավախք» քաղաքական շարժման առաջնորդ Վահագն Չախալյանի դատական գործը 2009-ի մայիսին ուղարկվել է Թբիլիսիի վերաքննիչ դատարան: Բողոքարկման դիմումներ է ներկայացրել միայն պաշտպանական կողմը: Դատախազը, որ եւս ուներ վճիռը բողոքարկելու իրավունք, չի օգտվել դրանից:**

**Այսպիսով, վերաքննիչ դատարանը միայն լսելու է պաշտպանական կողմին եւ իրավունք չի ունենալու խստացնել Ախալցխայի առաջին ատյանի դատարանի սահմանած պատիժը: Հիշեցնենք, որ Ախալցխայի դատարանը դատավոր Ցիրա Մայսուրաձեի նախագահությամբ ապրիլի 7-ին որոշեց Վահագն Չախալյանին դատապարտել տասը տարվա ազատազրկման՝ առանց տուգանքի, հորը՝ Ռուբեն Չախալյանին՝ հինգ հազար լարի տուգանքի, Վահագնի կրտսեր եղբորը՝ Արմենին, երկու հազար:**

**Չախալյանի գործում որպես ամբաստանյալ ներգրավված էին նաեւ Վահագնի հայրն ու եղբայրը: Դատարանից ազատ արձակված եղբոր հանդեպ վրաց իշխանությունները դեռ շարունակում են մեկուսացնելու մոտեցումները:**

**Մասնավորապես, 2009-ի մայիսի 30-ին Ախալքալաքի ոստիկանությունը ձերբակալել է Արմեն Չախալյանին՝ իրենց ընտանիքին պատկանող մեքենան առանց վարորդական իրավունքի վարելու պատրվակով: Մի քանի ժամ անօրինական կալանքում պահելուց եւ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելուց հետո Արմեն Չախալյանին ազատ են արձակել՝ մեքենան, սակայն, էվակուատորի միջոցով տեղափոխվել է Ախալցխա:**

**2009-ի մայիսի 29-ին Թբիլիսիի քաղաքացիական գործերով վարչական դատարանն անդրադարձել է Վահագն Չախալյանին առնչվող եւս մեկ խնդրի: Թբիլիսիի քաղաքացիական գործերով վարչական դատարանում կայացել է ֆրանսիացի փաստաբան, Փարիզի փաստաբանական կոլեգիայի անդամ Պատրիկ Արապյանին որպես ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի փաստաբանի չգրանցման Վրաստանի արդարադատության նախարարության որոշման բողոքարկման դատավարության երկրորդ նիստը:**

**Առաջին նիստի նման երկրորդն էլ ավարտվել է անարդյունք: Պատասխանող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարարությունը դատարանին ներկայացրել է գործի հետ կապված փաստաթղթեր եւ դրանից հետո դատարանը ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու պատճառաբանությամբ հետաձգել է դատավարությունը մինչեւ հունիսի 15-ը:**

**Դատավարության առաջին նիստը կայացել էր մայիսի 7-ին, որի ընթացքում դատավորը միայն ստուգել էր կողմերի փաստաթղթերը եւ անմիջապես հետաձգել նիստը մինչեւ մայիսի 29:**

**Չախալյանների շահերը նշված գործում պաշտպանում է վրացական «Մարդու իրավունքների կենտրոն» ոչ կառավարական կազմակերպության անդամ, փաստաբան Նինո Անդրիաշվիլին:**

Ա. Հ.

AZG NEW 3.QXD 6/1/2009 9:19 PM Page 1



# Երկու իրարամերժ կարծիքներ ընտրությունների կապակցությամբ

### Միջազգային դիտորդներն արձանագրեցին օրինականություն եւ առաջխաղացում

Եվրոպայի խորհրդի ՏԻՄ ընտրությունները դիտարկող կոնգրեսի դիտորդական առաքելության 15 դիտորդ էր ներկայացել Երեւանի քաղաքապետի ընտրություններին: Դիտորդները ընտրատեղամասերում եղել են մինչ տեղամասի բացումը, շրջել են ավելի քան 200-230 տեղամասերում: Յուրաքանչյուր տեղամասում եղել են հինգ րոպեից մինչեւ 2 ժամ: Որոշ տեղեր անակնկալ այցելել են երկրորդ անգամ: Դիտորդներ ներկա են եղել նաեւ տեղամասերի փակմանն ու հաշվարկին:

Նրանք երեկ ներկայացրին նախնական զեկույց, ասելով, թե ընտրությունը եղել է բավարար, դրական:

«Բավարարվածություն ենք հայտնում այն առումով, որ գործընթացն անցավ նորմալ, Երեւանի քաղաքացիներն ընտրում էին իրենց ավագանին: Հայաստանն իր սեփական հնարավորություններով նպաստեց դրական ժողովրդավարության ներդրմանը», գնահատեց դիտորդական առաքելության ղեկավար Նայջել Մերմագենը (Միացյալ Թագավորություն): Ըստ նրա՝ ընտրությունների ընդհանուր կազմակերպվածությունը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Դիտորդները փաստեցին, թե արձանագրել են զգալի առաջընթաց համեմատած Երեւանի 2008 ՏԻՄ ընտրությունների հետ:

Որոշ բացթողումներ այնուամենայնիվ եղել են, որոնք կարծես չեն վրիպել դիտորդների հայացքից, սակայն դրանց մասին նրանք գերադասեցին չխոսել: Դրանք կարտացոլվեն իրենց վերջնական զեկույցում: Սակայն դիտորդները վստահեցրին, որ այդ խախտումները ընտրությունների վերջնական արդյունքների եւ օրինականության վրա ազդեցություն ունենալ չեն կարող. ընդամենը կազմակերպչական բնույթի բացթողումներ էին: Վերջնական զեկույց կազմելու համար կոնգրեսի դիտորդները պատրաստ են լսել այլ կազմակերպությունների դիտարկումները, որոնք հաշվի կառնվեն վերջնական փաստաթղթում: Այն կներկայացվի կոնգրեսի աշնանային նստաշրջանի ընթացքում՝ հոկտեմբեր ամսին:



### «Մայիսի 31-ին Հայաստանում վախճանվեց ընտրական համակարգը»

«Թրանսփերենսի ինտերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը մայիսի 31-ին սեփական դիտարկումն է անցկացրել: Մասնակցել են ավելի քան 50 դիտորդներ:

Կազմակերպության ներկայացուցիչները դիտարկումը կատարել են 8-րդ ընտրատարածքում (այն ընդգրկում է Մալաթիա-Սեբաստիա հսկայական համայնքը): «Եթե մի երկրում կատարվում են այնպիսի ընտրություններ, ինչպիսին եղավ 8-րդ ընտրատարածքում, այդ երկիրը պետք է հռչակի, որ մայիսի 31-ին վախճանվեց ընտրական համակարգը որպես ինստիտուտ: Եկեք ընդհանրապես հրաժարվենք ու շարժվենք այլ ինստիտուտի կանոններով, որը վաղուց Հայաստանում կայացել է: Դա թաղային հեղինակությունների ինստիտուտն է, որ հերթական անգամ փայլուն աշխատեց», ասաց կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանը: Վերջինս վերոնշյալ ընտրատարածքում կատարվածը որակեց ցնցում: «Այսպիսի ապօրինի, անբարոյական եւ ցինիկ ընտրություններ Հայաստանում դեռեւս չէին գրանցվել: Սակայն ոչ բոլոր ընտրատեղամասերում են դիտորդները «բեսպրեդել» արձանագրել: Որոշ ընտրատեղամասեր բավարարվել են միայն փոքր ու միջին ընտրախախտումներ կատարելով: Ժամանակային առումով ընտրախախտումները կարելի է բաժանել երեք փուլի: Փոքր խախտումները՝ մի թեկնածուից երկու վստահված անձ, կնոջ անձնագրով ընտրություն, երկու ընտրողին չորս ծրար, «գազելներով» մարդկանց բերել, կատարվել են առավոտյան ժամերին: Առաջին լցոնման ահազանգը գրանցվեց առավոտյան ժամը 10-ին», ասում է Կոստանյանը: Վերջինս փաստում է, որ լցոնումների երկրորդ ռաունդը մեկնարկել է ժամը 12-ին: Կոստանյանն այն որակեց որպես կուտակումների եւ ուղղորդումների, ահաբեկության փուլ: Լցոնումների կուլմինացիան ժամը 5-8-ն ընկած ժամանակահատվածում էր: Կոստանյանի խոսքերով՝ ժամը 8-ից հետո մի շարք ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամներն արդեն «բարիշում էին», թե որ կուսակցությանը որքան տոկոս պետք է տան: «Դիտորդների նկատմամբ ահաբեկությունից զատ եղել են կաշառակերության դեպքեր, որպեսզի աչք փակենք: Դիտորդների մեծ մասին սափրագլուխները ահաբեկել են ու դուրս վռնդել տեղամասերից», ասում է Կոստանյանը:

Գումար ու էլի այլ ծառայություններ են առաջարկել նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցին. «Ասում էին՝ գնանք ախպերավարի հաց ուտենք, աղջիկներ էին առաջարկում: Սա սպասարկման նոր ձեւ էր: Ընտրական հանձնաժողովները ստեղծված էին ընտրությունները կեղծելու համար: Հանձնաժողովի նախագահը ժամը 8-ից հետո ընտրողների անվան դիմաց ստորագրում էր: Հայտնաբերել ենք դեպքեր, երբ գրանցամատյանները գողանում էին», ասում էր Արթուր Սաքունցը:

Դիտարկմանը, թե երեկ առավոտյան բոլորովին այլ պատկեր ներկայացրին միջազգային դիտորդները, Ամալյա Կոստանյանն ասաց. «Միտումը շարունակում է, միջազգային դիտորդները լեգիտիմացնում են ապօրինություններն ու իրավախախտումները, խրախուսում են նման վարքագիծ: Բնական է, որ այդ մարդկանց աչքի առաջ լցոնումներ չեն եղել, սակայն եթե տեսնեին էլ, հաշվետվությունը հաստատ դրական կլիներ», ասաց Ամալյա Կոստանյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մորեխները սպառնում են սահմանամերձ բնակավայրերին

**Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի հյուսիսարեւելյան շրջանում «ընդհանուր թշնամի» է հայտնվել՝ մորեխները: Այս օրերին սահմանամերձ գոտում տարվող բուռն պայքարը գյուղատնտեսական վնասատուների դեմ վկայում է լուրջ անհանգստությունների մասին: Այլ տվյալներով, բացի Մարտակերտի շրջանից, վնասատուների օջախներ են հայտնաբերվել նաեւ Մարտունու որոշ համայնքներում, իսկ դա նշանակում է, որ մորեխների համատարածության վտանգը չի չեզոքացված, թեպետ ԼՂՀ համապատասխան կառույցներն ամեն ինչ անում են վտանգի առաջն առնելու համար:**

**Իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով Մարտակերտի շրջան են այցելել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Արա Հարությունյանը, այլ պաշտոնյաներ: ԼՂՀ նախագահի բավականին կոշտ դիտողությունից հետո, որ նա արել էր օրերս իր մոտ կայացած խորհրդակցության ժամանակ, իրավասու կառույցներն ավելի պատասխանատվությամբ են կցվել մորեխների դեմ պայքարին: Ստեղծվել է դաշտային շտաբ՝ պաշտպանական, գյուղատնտեսական, առողջապահական եւ այլ գերատեսչությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ: Շտաբի պատասխանատու է նշանակվել ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տնօրեն Արսեն Սարգսյանը: Մորեխների ոչնչացման աշխատանքներին մասնակցում են նաեւ շրջակա գյուղերի բնակիչները:**

**ԼՂՀ գյուղնախարար Արմո Ծատրյանի հավաստմամբ, անհրաժեշտ թունաքիմիկատները բավարար են, առկա են համապատասխան գործիքները, մարդկային ներուժը: Մորեխների ներխուժման վտանգը չեզոքացնելուն, սակայն, խոչընդոտում է այն հանգամանքը, որ վնասատուների դեմ պայքարը տարվում է ռազմականացված գոտում: Ադրբեջանական կողմից անվտանգության երաշխիքների բացակայության պայմաններում դժվարությունները ավելի ակնհայտ են դառնում, ուստի պայքարն իրականացնող խմբերը լրացուցիչ միջոցներ են ձեռնարկում կասեցնելու մորեխների զանգվածային առաջխաղացումը:**

**Ինչպես նշում են մասնագետները, մորեխների լայնածավալ ներխուժման այս փաստն աննախադեպ է վերջին տասնամյակների կտրվածքով: Եթե չհաջողվի կասեցնել դրանց հետագա տարածումը եւ վնասատուները թափանցեն նաեւ հանրապետության մյուս շրջանների տարածքներ, ապա դա կարող է վերածվել գյուղատնտեսական աղետի, որովհետեւ լուրջ կասկածի տակ է դրվելու ընթացիկ տարվա բերքի ճակատագիրը:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ՈԼՈՐՏՆԵՐ

# «Զվարթնոցի» ազատ գոտում՝ ադամանդի բորսա

## *Ոսկերչության եւ ադամանդագործության զարգացման համար արվող քայլերը*

**Ոսկերչության եւ ադամանդագործության ոլորտներում զարգացում ապահովելու նպատակով կառավարության եւ մասնավոր հատվածի ջանքերով իրականացվող քայլերին երեկ «Նովոստի» գործակալությունում անդրադարձավ էկոնոմիկայի նախարարության առեւտրի եւ արդյունավետ շուկաների վարչության պետ Գագիկ Քոչարյանը: Նա նշեց, որ այս ոլորտի զարգացումը Հայաստանի համար առավել կարեւոր է, քանի որ այն գրեթե չունի տրանսպորտային ծախսեր, ապահովում է մեծաքանակ աշխատատեղեր, Հայաստանի բարձր ճանաչելիություն աշխարհում:**

**Ոսկերչության ոլորտի զարգացման համար, ըստ Գագիկ Քոչարյանի, կարեւոր նշանակություն կունենան այն օրենսդրական փոփոխությունները, որոնց արդեն կառավարությունը հավանություն է տվել: Մասնավորապես, ոսկու ներքին շրջանառությունն ազատվել է ավելացված արժեքի հարկից, ոսկերչությունն ազատվել է 1 տոկոս շահութահարկի կանխավճարից: Ենթակառուցվածքների ստեղծման մասին խոսելով, վարչության պետը մասնանշեց «Զվարթնոց» օդանավակայանի ազատ գոտում եւ Գյումրիում ոսկերչության զարգացումը: Մասնավորապես, նախատեսվում է «Զվարթնոցի» ազատ գոտում ստեղծել ադամանդի բորսա: Մեզ ավելի մոտ գտնվող ադամանդի բորսաներն այժմ Իսրայելում ու ԱՄԷ-ում են: Գյումրիում ոսկերչական դիզայներներ կպատրաստվեն, որոնք ուսանելու նպատակով կմեկնեն նաեւ Իտալիա: Այդ ծախսերն իրենց վրա վերցնելու պատրաստակամություն են հայտնել սփյուռքի ոսկերիչները:**

**Հաջորդ քայլը հումքի սեփական շուկան ձեւավորելն է: Էկոնոմիկայի նախարարության վարչության պետի հավաստիացմամբ, Մասիսի ոսկու գործարանը կկարողանա ապահովել մեր հումքի պահանջարկի մինչեւ 70 տոկոսը: Իսկ ադամանդի հումքի մասին տեղեկացվեց, որ բանակցություններ են ընթանում, որ ռուսական «Ալռոսան» Հայաստանին ուղղակի մատակարարի անմշակ ալմաստներ: Այդ նպատակով ռուսական կողմը տրամադրել է 100 մլն դոլարի վարկ:**

**Ոլորտի ցուցանիշների մասին խոսելով, Գագիկ Քոչարյանն ասաց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի քան 60 տոկոսով անկում է արձանագրվել, բայց միաժամանակ ավելացրեց, որ միայն մայիսի ցուցանիշները 16 տոկոսով աճել են նախորդ տարվա մայիսի համեմատ: Նա նաեւ հույս հայտնեց, որ մինչեւ տարեվերջ ձեռնարկված միջոցառումներով ադամանդագործության եւ ոսկերչության ոլորտում ավելի մեծ աճ կարձանագրվի:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում նախատեսվում է...

*1-ին էջից*

Ակնհայտ է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում նախատեսվող հաջորդ հանդիպումը հակասում է ռուսական նախաձեռնության չեզոքացման տրամաբանությանը: Ահա թե ինչու նույն Բրայզան «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում պետերբուրգյան հանդիպման նախօրեին նշում է. «Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների առաջիկա հանդիպումը, անշուշտ, շատ կարեւոր քայլ է ղարաբաղյան կարգավորման ճանապարհին, եւ մենք տարածաշրջանում ենք, որպեսզի առաջ մղենք հիմնահարցի կարգավորումը: Ինչ խոսք, մենք չենք ակնկալում, որ այդ հանդիպման ժամանակ փոխհամաձայնություն ձեռք բերվի բոլոր հիմնարար սկզբունքներում: Սակայն հույս ունենք, որ գործընթացը քայլ առ քայլ կկարգավորվի»:

Ի դեպ, մայիսի 7-ին Պրահայում տեղի ունեցած Սարգսյան-Ալիեւ հանդիպումից հետո, չնայած Մինսկի խմբի համանախագահների լավատեսությանը, Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հերքել էր հիմնարար սկզբունքներում կողմերի համաձայնության գալու մասին Բրայզայի խոսքերը, ապա եւ մատնանշել. «Ղարաբաղյան հիմնահարցում որեւէ առաջընթացի մասին խոսք լինել չի կարող: Հանդիպմանը քննարկել ենք կարծրացած խնդիրները: Ցավոք, հայկական կողմը նորից կառուցողական դիրքորոշում չդրսեւորեց: Ադրբեջանի տարածքների զավթման փաստն ակնհայտ է: Պահանջում ենք հայկական զորքերի դուրսբերումը այդ տարածքներից: Տարաձայնությունները շարունակվում են դրանց շուրջը ծավալվել»:

Մայիսի 12-ի համարում **«Ազգը»** անդրադարձել էր Մամեդյարովի մայիսի 10-ին Բաքվում արած հայտարարությանը, նշելով, որ դա պետք է վերագրվի ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունները նպատակից շեղելու եւ դրանք որպես Ադրբեջանի «գրավյալ տարածքների» ազատման միջոց օգտագործելու Բաքվի նկրտումներին:

Այս նկրտումներն, իհարկե, պայմանավորված են Մինսկի խմբի գործունեությունից Ադրբեջանի ակնհայտ դժգոհությամբ, որի արտահայտությունն են ադրբեջանական ձանձրալի կամակորությունները: Հատկանշական է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Մինսկի խմբի գործունեությունը, ինչպես թուրքական մամուլն է նշում, անհաջող է համարել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, իսկ ֆրանսիացի համանախագահ Ֆասիեն հակադրվել է նրան:

Խնդիրը, սակայն, Ֆասիեի հակադրությունը չէ, այլ Մինսկի խմբի գործունեությունը գնահատելն ու գնահատականը ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը միջամտելու նպատակին ծառայեցնելն, ինչն անում է Անկարան: Դա էլ պայմանավորված պետք է լինի այդ բանակցությունները ԵԱՀԿ հարթությունից ՄԱԿ-ի հարթություն տեղափոխելու Թուրքիայի նկրտումներով, որն անցյալ տարի ստացել էր Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամի կարգավիճակ:

Այլ կերպ, հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունները ՄԱԿ-ի հարթություն տեղափոխելու դեպքում անհամեմատ կմեծանան ազերի եղբայրներին օգնելու Թուրքիայի հնարավորությունները: Սակայն չպետք է մոռանալ այն առանցքային դերի մասին, որը Հարավային Կովկասում ազդեցություն ծավալելու առումով պարունակում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության նախաձեռնությունները: Այսինքն, ղարաբաղյան հիմնահարցում նախաձեռնությամբ հանդես գալն ամրապնդում է նախաձեռնողի դիրքերը տարածքում եւ նրա առջեւ բացվում են ազդեցության լայն հեռանկարներ: Ահա թե ինչու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներ ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, միմյանց հետ մրցակցելով հանդերձ, միահամուռ ջանքերով հակադրվում են հակամարտությանը միջամտելու թուրքական ջանքերին եւ ամեն կերպ չեզոքացնում կարգավորման բանակցությունները ՄԱԿ-ի հարթություն տեղափոխելու թուրք-ադրբեջանական ձեռնարկումները:

# Ավագ դպրոցի մեկամյա փորձաշրջանը վերացրել է բոլոր տրտունջները

Հանրապետության 10 դպրոցներում անցած տարի մուտք գործած ավագ դպրոցի փորձնական ծրագիրը սկզբնական շրջանում արժանացավ դպրոցների տնօրենների ու ծնողների ակնհայտ տրտունջներին, քանի որ նրանք հստակ չէին պատկերացնում, թե շոշափելի ինչ արդյունքներ կարող էր տալ ավագ դպրոցը, այն էլ կարճ ժամանակահատվածում: Սակայն, ի զարմանս նրանց, հոսքային ուսուցման օգտավետությունը նկատելի դարձավ մի քանի ամսից` հույս ներշնչելով, որ բուհ ընդունվելու մտադրություն ունեցող աշակերտն ավարտական դասարանում այլեւս կարիք չի ունենա լրացուցիչ պարապմունքների ու ծնողին կազատի նյութական ծանր հոգսից:

Կրթության ոլորտի պատասխանատուներն ակնկալում են, որ ավագ դպրոցի փորձնական ծրագրում ընդգրկված Երեւանի թիվ 112 (Մալաթիա-Սեբաստիա), 195 (Աջափնյակ), 198 (Նորքի 9-րդ զանգված), Աշտարակի թիվ 5, Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի կրթահամալիրը, Գավառի թիվ 1, Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան դպրոցը, Գյումրու թիվ 45, 12 եւ 3 դպրոցները կապահովեն սահուն անցում հանրակրթությունից բուհական համակարգ:

Կրթության եւ գիտության նախարարության հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանից տեղեկացանք, որ օրերս կառավարություն է ներկայացվել ավագ դպրոցների թիվն ավելացնելու նախագիծ: «Նոր ուսումնական տարում հանրապետության մարզերում եւ մայրաքաղաքում կունենանք եւս 38 ավագ դպրոց: Անցած տարի ծրագրում ընդգրկել էինք Երեւանի ծայրամասերի` Աջափնյակ, Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա համայնքների դպրոցները: Իհարկե, դեռ անելիքներ կան, որովհետեւ ունենք ծայրամասային դպրոցներ, որոնց հարեւանությամբ այլ դպրոցներ չկան, եւ հենց դա էլ բարդացնում է ավագ դպրոցի ստեղծումը:

Այս տարի ավագ դպրոցներ կստեղծենք հանրապետության տարբեր մարզերում եւ Երեւանի մյուս համայնքներում: Օրինակ, Ապարանում բացված մեկ դպրոցին կավելանա եւս մեկը, եւ այնտեղ ծրագիրը կհամարենք փակված, Թալինում նույնպես կունենանք միայն ավագ եւ հիմնական դպրոցներ: Սեւանում բացել ենք մեկ ավագ դպրոց, հետագայում կտեսնենք` երկրորդը բացելու անհրաժեշտություն կլինի՞, թե՞ ոչ: Արթիկում նախատեսում ենք բացել 2 դպրոց, Գյումրիում թերեւս ունենք 4-5 դպրոց, բայց էլի կարիք է զգացվում, որովհետեւ մեծ քաղաք է, անելիքներն այնտեղ շատ են: Մի խոսքով, անցած տարի բացված 10 ավագ դպրոցներին եկող տարի կավելանան եւս 38-ը: Ծրագիրը կշարունակվի, մինչեւ 2012 թվականը կունենանք 150 ավագ դպրոց ամբողջ հանրապետությունում», ասաց Նարինե Հովհաննիսյանը:

Ավագ դպրոցի համար մշակված ուսումնական պլանը աշակերտին հնարավորություն է տալիս խորությամբ ուսանելու այն առարկաները, որ նրան անհրաժեշտ են բուհական քննությունները հանձնելու ժամանակ: Հանրակրթության վարչության պետը նաեւ նշեց, որ նոր ուսումնական տարում, ի տարբերություն նախորդ տարվա, սկսվում է եռամյա ավագ դպրոցը, որը աշակերտի համար հնարավորություն է ստեղծում 12-րդ դասարանում բուհական քննություններից առաջ պարապելու կրկնակի դասաժամերով, բացի այդ, 2-րդ կիսամյակն ամբողջապես նվիրվում է անցածի կրկնությանը: Նա համոզված է, որ եռամյա ավագ դպրոցն աշակերտին գրեթե լիովին կազատի լրացուցիչ պարապմունքների հաճախելու անհրաժեշտությունից, նաեւ կբացառի ավարտական դասարանում դպրոց չհաճախելու, սակայն գնահատականներ ստանալու սովորույթը: «Քանի որ ավագ դպրոցում գործ ունենք տարբեր ընդունակությունների տեր աշակերտների հետ, ծրագիրը նախատեսում է լրացուցիչ պարապմունքների մի հատված, որը կդիտվի որպես ռազմավարական ծրագիր: Եթե ավարտական դասարանում առանձին աշակերտներ կարիք ունենան հավելյալ պարապմունքների, նրանց համար կբացվեն ֆակուլտատիվ կամ պայմանագրով վճարովի ծառայություններ` չնչին գումարի դիմաց: Լրացուցիչ պարապմունքներն ընդունված են ամբողջ աշխարհում, եթե բարձր ընդունակությունների տեր եւ ինքնուրույն պարապող աշակերտը դրա կարիքը չունի, ապա քիչ ավելի թույլ աշակերտի համար երբեմն դա անհրաժեշտ է: Միշտ էլ քննությունից առաջ, նույնիսկ հասուն տարիքում, պահանջ է առաջանում, որ տվյալ մասնագետը ստուգի գիտելիքները, ուղղորդի, խորհուրդներ տա: Այնպես որ, եթե նույնիսկ լրացուցիչ պարապմունքների կարիք առաջանա, կիրականացվի բոլորովին այլ ձեւով, որպեսզի աշակերտը սթրեսային վիճակի մեջ չընկնի, իսկ ծնողը զուր տեղը խոշոր գումարներ չծախսի»:

Նարինե Հովհաննիսյանի խոսքով, ավագ դպրոցի մեկամյա փորձաշրջանը ուսանելի է եղել հատկապես կազմակերպչական առումով, օգնել է հասկանալու, ուղղորդելու աշակերտին, պարզելու նրա նախասիրություններն ու ճիշտ կողմնորոշելու: Ավագ դպրոցը գալիս է մեծացնելու հիմնական դպրոցի պատասխանատվությունը, պահանջելու հարուստ գիտելիքներով աչքի ընկնող ջանասեր աշակերտներ: «Լրացուցիչ պարապմունքների վրա հույս դնելն ահավոր ախտ էր հիմնական դպրոցում, որովհետեւ միջին դպրոցից հետո աշակերտն ամբողջապես կենտրոնանում էր միայն լրացուցիչ պարապմունքների վրա: Փորձնական ծրագրում ընդգրկված բոլոր 10 դպրոցներն այցելելուց, ուսուցիչների, ծնողների եւ աշակերտների հետ զրուցելուց հետո նկատեցինք, որ բոլոր նրանք, ովքեր տարեսկզբին դժգոհում էին, թե այդ ինչ փորձանք էինք բերում իրենց երեխաների գլխին, միանգամայն հանգիստ էին եւ դժգոհություններ չունեին: Ավագ դպրոցը մեր հանրակրթության համար չափազանց կարեւոր է եւ ամեն ջանք թափելու ենք, որ բարեհաջող ընթացք եւ ավարտ ունենա», այսպիսի վճռականությամբ իր խոսքն ամփոփեց հանրակրթության բաժնի պետ Նարինե Հովհաննիսյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Նոր մասնագիտություն` baby sitter

**Գործարարության ու գործնականության մեր ժամանակներում շատ մայրիկներ կամա-ակամա զրկված են լինում իրենց նորածիններին կամ փոքրիկներին խնամելու հաճելի պատասխանատվությունից: Քառասունքից դուրս եկած մայրիկը կարոտալից աչքերով նայում է փոքրիկին ու փակում տան դուռը` փոքրիկի աղեկտուր ձայնից չփղձկալու եւ աշխատանքի վազելու համար: Միայն թե փախչելուց առաջ նա պետք է լուծի հարցերի-հարցը` գտնի վստահելի ու հմուտ փոխարինողին կամ իր սիրասուն բալիկի 2-րդ մայրիկին, որն, ի տարբերություն իրեն, վարձատրություն է պահանջում փոքրիկին պահելու համար: Եթե փոխարինողը գործի գիտակ եւ նվիրյալ է, հպարտությամբ է կրում baby-sitter կոչումը, որ անգլերեն-հայերեն բառարանում թարգմանված է` դայակ: Եթե ոչ` նա թաքցնում է իր զբաղմունքը ծանոթ-բարեկամներից, համարելով դայակությունը ոչ այնքան պատվաբեր աշխատանք:**

**Մեր առաջին հերոսուհին համաձայն չէ այդ տերմինին: «Դայակ» բառը չի բնորոշում ողջ կերպարն այն կնոջ, ում պետք է վստահեմ իմ ամենաամենան, իմ ալֆան եւ օմեգան», ասում է Տաթեւիկը: Նա փոքրիկին կյանքի երրորդ ամսում իսկ վստահեց իր մոտ ընկերուհուն, որն աշխատանք չուներ: Առժամանակ անց baby-sitter-ի վերածված ընկերուհին Տաթեւիկի հույսերը չարդարացրեց: Մայրիկը երեխային պարբերաբար հայտնաբերում էր թաց տակաշորով ու ցերեկային հագուստով քնած: Մինչդեռ, ըստ Տաթեւիկի, օրական երկու հազար դրամը քիչ գումար չէր երաժշտագետի մասնագիտությամբ գործազուրկ իր ընկերուհու համար, որն առժամանակ անց, այնուամենայնիվ, տեղը զիջեց Տաթեւիկի մայրիկին: Հիմա տիկին Կարինեն «ոտքը կապած» եւ տանը նստած է, հացի անգամ չի կարող գնալ: Նա առավոտից պահում է երեխային, իսկ կեսօրին տատիկի մոտ է գալիս նաեւ առաջին դասարանցի թոռնուհին:**

**«Մամայից լավը չկա», համոզված է Տաթեւիկը, որն այլեւս չի զբաղվում baby-sitter գտնելու անօգուտ փնտրտուքով:**

**Ի տարբերություն Տաթեւիկի, Սոնան երկար է փնտրել baby-sitter-ի հարմար տարբերակ իր միակ որդու համար: Նա հիշում է. «Ես աշխատում էի այլ քաղաքում, երեխաս առաջին դասարան էր գնում: Օգնող չկար, իսկ առաջարկված պաշտոնը բաց թողնելն աններելի կլիներ: Ապրել էր պետք: Դայակին շատ չէի կարող վճարել, դրա համար շատ փնտրեցի, նախ` գովազդով իրենց ծառայությունն առաջարկողների (նրանց «Գինդ»-ից էի գտնում), հետո` ուսանողների, ապա` հարեւանների շրջանում, ավելի ուշ` երկարօրյա ռեժիմով դպրոցների միջանցքներում: Այստեղ էլ տղաս գտավ մեր սիրելի Գոհարիկին, որին շատ հավանել էր, եւ խմբակում թաքուն թաքիկին գրել նրա հեռախոսահամարը: Տղաս եւ Գոհարիկը դուրս եկան այդ կենտրոնից, ուր կասկածելի հագուկապով «բիզնես-լեդիներ» էին: Պակաս պատճառաբանություն չէր, որ տղաս ոջիլով էր վարակվել: Գոհարիկին վճարում էի պարտաճանաչորեն այնքան, ինչքան խոստացել ու չէին վճարել այդ չարաբաստիկ կենտրոնում: Նա պահեց տղայիս վեց ամիս, հետո ամուսնացավ ու էլ չեկավ մեր տուն: Փնտրտուքս բերեց նախկին ուսուցչուհի, թոշակառու մի տիկնոջ մոտ, որն այնքան անուշադիր էր եղել, որ տղաս մի քանի օր շարունակ կախվել էր 10-րդ հարկի մեր պատշգամբից, էլ չեմ ասում օր օրի ավելացող «2»-ների մասին: Հաջորդը մի շատ պարտաճանաչ տիկին էր, որ երկրորդ ամսում պահանջեց կրկնակի վճարել իրեն: Հետո եկավ մի օրիորդ, որը չէր ուզում վաճառողուհի աշխատել, նա էլ գնաց: Մեր վերջին դայակը մեր բարեկամի զարմուհին էր, որը զլացել էր իմ եփած ճաշը երեխայիս ուտեցնել, փոխարենն ինքը հաճույքով անուշ էր արել: Երկու տարվա տառապանքներից հետո 9-ամյա տղաս լացով-աղերսելով խոստացավ, որ ինքը միայնակ կարող է փողոցն անցնել եւ տանը մենակ մնալ, միայն թե էլ ոչ մի դայակ չգա, միեւնույն է, չարություն է անելու եւ դուրս է անելու «իր տնից»: Սկզբում վարանեցի, ապա ճարահատյալ համակերպվեցի, բայց այդ օրերի անելանելի վիճակը երբեք չեմ մոռանա», պատմում է Սոնան:**

**Գայանեենց տան անդամների թիվը չորս տարի է, ինչ մեկով ավելացել է: Դայակն է պահում Գայանեի երեք դստրիկներին: «Շատ դժվարությամբ համակերպվեցի դայակ ունենալու մտքին: Տիկին Ռիման մանկապարտեզում որպես բուժքույր է աշխատել 25-30 տարի: Երեխաների հետ լեզու գտնում է, բայց չեմ ասի, թե նա շատ կրթված մարդ է, որն, իհարկե, խանգարում է: Լավ է` մի քիչ քաղաքակիրթ չլինի, բայց վստահելի լինի»: Գայանեի համար այնքան էլ էական չէ, դայակը մասնագիտական կրթություն ունի՞, թե՞ ոչ: «Դայակի ընտրության հարցում ամեն ինչ է կարեւոր` տարիքը, հոգին, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, մեզնից հեռո՞ւ թաղամասում է ապրում, թե՞ մոտիկ, ինչպիսի՞ ընտանեկան դրություն ունի, այսինքն` կարո՞ղ է մշտապես մեր տուն գալ, թե՞ խնդիրներ կունենա, կբացակայի»: Գայանեն շատ է մտահոգվում պատահարների ու չնախատեսված իրավիճակների մասին մտածելիս.**



**- Դայակի հարցում անգամ չես կարող հասկանալ` որն է ավելի կարեւոր. որ երեխան անվտանգության մե՞ջ լինի, թե՞ որ դայակը պարզապես սիրի երեխային: Դայակի հարցում շատ կարեւոր է տարիքը, բայց ոչ երբեք դիպլոմի առկայությունը: 25 տարեկան աղջիկը դժվար իմ երեխաներից գլուխ հաներ:**

**- Գուցե խանդո՞ւմ ես, ամուսնուդ նկատմամբ:**

**- Եթե ամուսինս ուրիշ` կասկածելի մարդ լիներ, կզգուշանայի, բայց ամուսնուս վստահում եմ:**

**Գայանեն դայակին վճարում է շաբաթական 25 000 դրամ, այսինքն` ամիսը 100 000 դրամ, որի դիմաց տիկինը պարտավոր է նաեւ ճաշիկ եփել 1, 5 եւ 8 տարեկան երեխաների համար, ուտեցնել նրանց, կատարել մանր-մունր աշխատանքներ, սպասել Գայանեի վերադարձին տուն, ինչքան որ պետք է: «Իհարկե, մեր դայակը բազմաթիվ թերություններ ունի, բայց ես եկել եմ այն եզրակացության, որ հնարավոր չէ գտնել և՛ կիրթ, և՛ մաքրասեր, և՛ երեխաներին սիրող կնոջ», ասում է բազմազբաղ մայրիկը, որը դժվար թե դատի տա դայակին, եթե երեխաներից մեկի հետ դժբախտ պատահար լինի:**

**Քրիստինեն հրեշտականման իր երեխային վստահում է սկեսրոջը կամ մայրիկին: «Ես եւ ամուսինս համոզված ենք, որ ամենավատ տատիկը իր թոռնիկին ավելի լավ կպահի, քան ամենալավ դայակը, որովհետեւ տատիկը պահում է իր հարազատին` թոռնիկին: Բացի այդ, չկա այն ինստիտուտը, որ դայակին կտա մասնագիտացում եւ երաշխավորագիր կամ բնութագիր, դրա համար դայակ գտնելու ընդունված ձեւ է ծանոթ-բարեկամ-խնամի կապերի օգտագործումը»: Քրիստինեի կարծիքով` երեխայի դաստիարակության գործում անչափ կարեւոր է մանկապարտեզի դերը, ուր երեխան սովորում է շփվել արտաքին աշխարհի եւ տարեկիցների հետ` իրեն ընկալելով ոչ թե աշխարհի կենտրոնը, ինչպես տատիկներն են կարծում, այլ բազմաթիվ երեխաներից մեկը` նույնանման իրավունքներով եւ պարտականություններով: Սակայն եթե մայրիկն ուշ ժամերի է աշխատում, մանկապարտեզը չի լուծում երեխայի ապահովության հարցը, մնալով միայն ժամանցի եւ սոցիալիզացման վայր: Քրիստինեն հիշում է մի պատմություն: Մի մայրիկ հայտնաբերել է երեխային միայնակ տանը լալիս, երբ մոռացած իրը վերցնելու համար ժամանակից շուտ էր եկել տուն եւ հայտնաբերել, որ դայակն առանց որեւէ մեկին զգուշացնելու «թողել էր»` հարազատ թոռնիկին մանկապարտեզից տուն տանելու:**

**Տիկին Տանյան մասնագիտությամբ ինժեներ է, բայց 13 տարի է, ինչ վերամասնագիտացել է որպես դայակ, ընդ որում առաջարկել են բարեկամները, իմանալով, որ Տանյան աշխատանք չունի: 48-ամյա կինը ընդգծում է, որ դայակը ամենապատասխանատու աշխատանքն է: «Համբերատարություն եւ մեծ լարում է պահանջում: Ուրիշի երեխա է, նրան ոչ թե երկու, այլ չորս աչքով եմ պարտավոր նայել», ասում է Տանյան, որ կարեւորում է ոչ այնքան դայակի դիպլոմը կամ վկայականը, որքան հանգամանքը, որ կինը պետք է մայր լինի, երեխաներ պահելու փորձ ունենա: Տանյան վաստակում է ամսական 60 000 դրամ` 9.30-ից մինչեւ 18.30 մեկ երեխա պահելու համար: Հիմա Տանյան պահում է 1,5-ամյա աշխույժ մի պստիկի, որ շատ չարաճճի է եւ սիրում է տարբեր բարձրություններից գլորվել, սուր, կտրող գործիքներով խաղալ: «Անչափ շատ եմ սիրում այս բալիկին: Այնքան չարաճճի է, որ եթե չսիրեի, մի ժամ էլ չէի կարող պահել»: Տանյան թախիծով է պատմում, որ իր պահած փոքրիկները մեծանում են ու դպրոց գնալով մոռանում իրեն, իսկ ինքը տարիներով կարոտում է նրանց:**

**Մեր պատմությունը baby-sitter-ների եւ նրանց դեռեւս ընդհատակյա գործունեության մասին (մասնավոր այս ծառայությունը չի գրանցվում, չի ստուգվում եւ, բնականաբար, չի հարկվում պետական համապատասխան մարմինների կողմից: Այն նաեւ զերծ է որեւէ ապահովագրությունից եւ պայմանագրային ձեւաչափից) ավարտում ենք Սոնայի որդու` baby-sitter-ների տարբեր բովերով անցած Վահագնի եզրահանգմամբ. «Ես իմ առաջին դայակին եմ շատ կարոտում, բայց երեխային պետք է մայրիկը պահի: Նրանից լավ ոչ ոք չի ճանաչում երեխային ու չի տա նրան, ինչ ուզում է», ասում է 13-ամյա տղան:**

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Ռուս ուղղափառ եկեղեցին ընդլայնում է իր ազգանպաստ գործունեությունը. նոր նախաձեռնություն ընդդեմ հարբեցողության

«Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլը, անշուշտ, պետական այր է: Լինելով երկնային թագավորի լիիրավ ծառան, նա խորաթափանցորեն տեսնում է երկրային թագավորության անկանոնությունները: Որպես փայլուն պատմաբան, որն զգում է ռուսաստանյան պետության քմահաճ վայրիվերումները, նա գիտի իշխանության տեխնոլոգիան եւ տնօրինում է նրա միստիկական, երկնային էությունը: Նա անկաշկանդ շփվում է օտարերկրացիների հետ ինչպես փորձառու դիվանագետ: Հեշտությամբ լեզու է գտնում տեխնոկրատների հետ, չերկյուղելով կոնվեյերային արտադրությունից, քվանտային ֆիզիկայից, ազատ է կենսաբանության, բժշկության մեջ: Հոգեւոր հովիվը հասկանալի է նաեւ ոչ եկեղեցական մարդուն: Հմուտ տնտեսագետ է եւ հղկված աստվածաբան: Նրա ելույթներն ընկալում են ե՛ւ կասկածամիտ աթեիստը, ե՛ւ նորահավատ քրիստոնյան...

Ռուսական պատմությունը քմահաճ է եւ անկանխագուշակելի: Նրանում չեն գործում պատմական օրենքները, որոնց համաձայն Ռուսաստանը պիտի բազմիցս կործանվեր: Այստեղ գործում է ռուսական հրաշքը, որն ունի ոչ թե երկրային, այլ երկնային բնույթ:

Ո՞վ գիտի, չի՞ մոտենում այն ժամը, երբ կբացվեն Կրեմլի մարմարե սրահի ոսկեզօծ դռները եւ պաշտոնավորների ու պատգամավորների հայացքները կշրջվեն արարողապետի բացականչական ձայնի ուղղությամբ, որը կրքոտ ու բարձրաձայն կհայտարարի՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ, Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ»:

Հազիվ թե տեղին է սեփական հոդվածը սկսել նման ընդարձակ, այն էլ վերամբարձ ոճով արտահայտված օտար մեջբերումով: Բայց այդպիսին է Ռուսաստանի ազգասեր մտավորականության վերաբերմունքը երկրի ներկայիս հոգեւոր բարձրագույն ներկայացուցչի նկատմամբ: Եվ սա սոսկ գեղեցկախոսություն չէ եւ ոչ էլ պատրանքային մտայնություն պատրիարքին տեսնելու նաեւ աշխարհիկ բարձրագույն գահին: Պատրիարք Կիրիլը հիրավի դարձել է վերածնվող Ռուսաստանի վսեմ խորհրդանշաններից մեկը:

Իրոք որպես ազդեցիկ պետական գործիչ, պատրիարքը ներդաշնակ հարաբերություններ է ստեղծում երկրի քաղաքական ղեկավարության հետ, ընդսմին, բնավ էլ ոչ եկեղեցու եւ իր սեփական ինքնուրույնության նվազեցման հաշվին: Ավելին, վայելելով իր ժողովրդի մեծ հարգանքն ու վստահությունը, նա ակտիվ աջակցություն է առաջարկում ներպետական շատ հարցերի քննարկման եւ լուծման ասպարեզում: Մասնավորապես առաջնահերթ խնդիրներից է մասնակցությունը դպրոցականների եւ առհասարակ երիտասարդության դաստիարակության գործին:

Նորերս Մոսկվայում տեղի ունեցած Համաշխարհային ռուսական ժողովրդական XIII ժողովում պատրիարքի նախաձեռնությամբ քննարկվեց ալկոհոլային սպառնալիքից պաշտպանվելու անհետաձգելի միջոցառումների հարցը: Ամենաանսովորը, թերեւս, այն է, որ եկեղեցին առաջին հայացքից զուտ աշխարհիկ խնդրի լուծման մեջ առաջարկում է ոչ միայն, բնական է, բարոյական ներգործության միջոցներ, այլեւ առավելապես օրենսդրական, վարչական, լրատվական եւ այլ միջոցառումներ, այդ թվում նաեւ՝ արգելել եւ նույնիսկ պատժել:



«Երկար տարիներ մեզ հավատացրել են, ասում է պատրիարքը, որ էկոնոմիկայում գլխավորը կապիտալն է, արտադրության միջոցները, տեսություններն ու տեխնոլոգիաները: Սակայն զարգացող ճգնաժամը հերքում է այդ պնդումները: Էկոնոմիկայում գլխավորը մարդն է. նրա մտքից, նրա հոգուց, նրա բարոյական վիճակից են կախված համաշխարհային տնտեսության ներկան ու ապագան»:

Կոնկրետացնելով իր խոսքը քայքայիչ արատի՝ հարբեցողության վրա, պատրիարքը համաժողովում սրտի մեծ ցավով նշում է, որ խմիչքասեր մարդը կորցնում է հարազատների ու ծանոթների հարգանքը, քայքայվում են նրա ե՛ւ ոգին, ե՛ւ մարմինը: Եվ դաժան է ու սարսափելի նրանց ճակատագիրը, երբ իսկայական քանակությամբ մարդիկ տառապում են այդ չարիքից, երբ կազմալուծվում են բազում ընտանիքներ: Ինչքա՞ն երեխաներ են որբանում կենդանի ծնողների առկայության պայմաններում:

Ռուս եկեղեցին չի խուսափում նաեւ դաժան իրողությունների ու փաստերի հրապարակումից, քանզի ակնհայտ են այդ երեւույթի կործանարար հետեւանքները հատկապես ժողովրդագրական առումով: Ըստ փորձագետների հաշվարկների, տարբեր տվյալներով, Ռուսաստանում հարբեցողությունը տարեկան տանում է 550-700 հազար մարդկային կյանք՝ ընդհանուր մահացության մեկ քառորդ մասը: Բայց չէ՞ որ դա մի մեծ քաղաք է արդեն: Վերջին քսան տարում խմիչք օգտագործող դեռահասների տարիքը 16-ից իջել է 13 տարեկանի: Հե՞շտ է պատկերացնել 13 տարեկան «խմող» երեխայի: Իսկ «Ռոսպոտրեբնադզորի» տվյալներով, Ռուսաստանում ամեն օր ոգելից խմիչքին (ներառյալ գարեջուրը) առնչվում է պատանիների 33 եւ աղջիկների 20 տոկոսը: Ի՞նչ կենսական հեռանկարի մասին կարելի է խոսել:

Փաստորեն չի գործում մինչեւ 18 տարեկան անձանց ոգելից խմիչքներ չվաճառելու օրենսդրական արգելքը: Ավելին, առկա է դրանց շուրջօրյա մատչելիությունը, ինչը երբեք չի եղել Ռուսաստանի պատմության մեջ: Զարգացած երկրների մեծ մասում գոյություն ունեն ժամանակի իմաստով սահմանային խմիչքների վաճառքի սահմանափակումներ: Իսկ ներկայիս Ռուսաստանում երեկոյան եւ գիշերային ժամերին խմիչքի օգտագործումը (մինչեւ հարբելը) հանգեցնում է բազմաթիվ ինֆարկտների, ինսուլտների, հանցագործությունների, ինքնասպանությունների, տրավմատիզմի, ճանապարհատրանսպորտային պատահարների եւ այլն:

Խիստ անարդյունավետ է պայքարը ոգելից խմիչքների ոչ լեգալ արտադրության դեմ, ինչը կազմում է թունդ խմիչքների արտադրության մոտ 50 տոկոսը: Սակայն թունավորումների եւ մահացածության մակարդակի բարձրացմանը էապես նպաստում է որպես խմիչք բժշկական, օծանելիքի եւ տեխնիկական նշանակության արտադրանքի օգտագործումը (մոտ 20 տոկոս):

Հատուկ ուշադրության է հրավիրվում գարեջրային հարբեցողության վրա: Ռուսաստանը աշխարհի այն քիչ երկրներից է, որտեղ գարեջուրը չի ճանաչված որպես ոգելից խմիչք, ինչն այն դարձնում է առավել մատչելի հատկապես դեռահասների համար: Գինը ցածր է, չկան արտադրության եւ վաճառքի սահմանափակումներ:

Եկեղեցական համաժողովը չի սահմանափակվում սոսկ աղետալի իրողությունների արձանագրմամբ, այլ տալիս է իր հանձնարարականները: Առաջադրվում են խմիչքների արտադրության եւ վաճառքի զանազան արգելիչ միջոցներ, ժամանակային սահմանափակումներ, համապատասխան օրենսդրության ուժեղացում, ընդհուպ քրեական պատասխանատվության ենթարկելը, ավելի քան 3,5 տոկոս էթիլային խմիչք պարունակող գարեջրի ճանաչումը որպես ոգելից խմիչք, խմիչքների գովազդի արգելում, ԶԼՄ-ներում հակաալկոհոլային լայնածավալ քարոզչության ապահովում եւ շատ այլ միջոցներ:

Ակնհայտ է, որ Ռուս ուղղափառ եկեղեցին իր պատկառազդու նոր հովվապետի առաջնորդությամբ հոգեւոր առաքելությամբ իրագործման հետ մեկտեղ ընդլայնում է բազմակողմանի ազգանպաստ գործունեությունը: Եվ կարելի է ակնկալել, որ աշխարհիկ իշխանությունները ընդառաջ կգնան նրա ազնիվ ձգտումներին:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Իսրայելի կառավարությունը մերժեց քաղաքացու երդման օրինագիծը

**Իսրայելի կառավարությունը մերժել է պետությանը քաղաքացու երդմնակալության օրինագիծը, որն առաջարկել էր «Մեր տունն Իսրայելն է» աջամետ կուսակցությունը: Օրինագծի դեմ քվեարկել են 8, կողմ՝ 3 նախարարներ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Քիչ հավանական է համարվում օրինագծի ընդունումը նաեւ երկրի խորհրդարանում:**

**«Մեր տունն Իսրայելն է» կուսակցության առաջնորդը նորանշանակ արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանն է:**

**Լիբերմանն առաջարկել էր «սիոնիստական եւ ժողովրդավարական Իսրայելի պետությանը» հավատարմության երդում տալը պարտադիր նախապայման դարձնել երկրի քաղաքացիություն ստանալու համար: Առաջարկվում էր, որ 16 տարին լրացած իսրայելցիները միայն այդ երդումը տալուց հետո ստանան անձնագիր:**

**Իսրայելի բնակչության 20 տոկոսը կազմող արաբները դեմ էին արտահայտվել օրինագծի հիշյալ ձեւակերպմանը, իսկ փաստաթղթի ընդունման դեպքում նրանք փաստորեն կզրկվեին անձնագրից: «Մեր տունն Իսրայելն է» ծայրահեղ աջ կուսակցությունը փետրվարին կայացած խորհրդարանական ընտրություններում գրավել էր 3-րդ տեղը: Իսրայելի քաղաքացու հավատարմության երդման օրինագծի գաղափարը Լիբերմանը սկսել էր արծարծել դեռ նախընտրական արշավի ընթացքում:**



# Air France-ի օդանավը կործանվել է Բրազիլիայի ափերի մոտ

**Հունիսի 1-ի առավոտյան Ռիո դե Ժանեյրոյից Փարիզ թռած A 330-200 աէրոբուսը ռադարների էկրաններից անհետացել է Փարիզ հասնելուց մոտ երեք ժամ առաջ: Բրազիլիայի իշխանությունները BBC-ի թղթակցին ասել են, որ երկրի օդուժի փրկարարական ջոկատը ֆրանսիական Air France ավիաընկերության կորած օդանավը որոնում է Ֆեռնանդո դի Նորոնյա կղզու շրջանում, որը մոտ 350 կմ հեռու է Բրազիլիայի հյուսիսարեւելյան ափից:**

**Բրազիլիայի եւ Ֆրանսիայի ճանապարհի կեսին գտնվող Կանաչ Հրվանդանի Հանրապետության Սալ կղզու ռադարը օդանավի անցում չի արձանագրել: Ֆրանսպրեսի տվյալներով, կորած օդանավում եղել են 216 ուղեւոր եւ անձնակազմի 12 անդամ: Անհետացման պահին օդանավը գտնվել է Ատլանտյան օվկիանոսի վրա:**

**Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայանում սկզբում չեն բացառել օդանավի հետ ռադիոկապի խզված լինելը (թեեւ նման դեպքերը խիստ հազվագյուտ են), բայց ավելի ուշ չվակարգիչ ծառայության աշխատակիցները խոստովանել են, որ հույս չունեն, թե կորած օդանավը փրկված լինի:**

# ԱՄՆ-ում կմտցվեն միջնակարգ կրթության ընդհանուր ստանդարտներ

**Ամերիկյան 50 նահանգներից 46-ը, ինչպես նաեւ Կոլումբիա դաշնային օկրուգը մտցնելու են նախադպրոցական եւ միջնակարգ կրթության ընդհանուր ստանդարտներ: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն փոստ» թերթը: Կրթական ստանդարտների մշակմամբ պետք է զբաղվեն Նահանգապետների ազգային ընկերակցությունում եւ Նահանգային դպրոցների գլխավոր պաշտոնյաների խորհրդում:**

**Մինչեւ օրս ուսումնական ծրագրերի բովանդակությունը եւ գիտելիքների ու հմտությունների պարտադիր մակարդակը սահմանվում էին նահանգներում: Այս իրավիճակը երկրում զգալի դժգոհություն է առաջացնում: Աշակերտներին ներկայացվող պահանջների մակարդակը բավական ցածր է:**

**Ստանդարտացման նախաձեռնությանը հավանություն է տալիս նահանգապետների մեծ մասը: Սակայն հանրապետական նահանգապետներից շատերը կողմնակից են ներկայիս կարգի պահպանմանը:**

**Երբ ստանդարտների ծրագրի մշակումն ավարտվի, այն պետք է հաստատվի յուրաքանչյուրի առանձին նահանգում:**

# Օբամային «սպանելու կոչ» ամերիկյան թերթում

**Փենսիլվանիայի նահանգում 11 հազար օրինակ տպաքանակով լույս տեսնող The Warren Times Observer թերթը հրապարակել է հայտարարություն, որով «կոչ է արվում» սպանել ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային:**

**Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Թո՛ղ Օբաման գնա Լինքոլնի, Գարֆիլդի, Մակքինլիի եւ Քենեդու հետեւից»:**

**Թերթն արդեն ներողություն է խնդրել տվյալ հրապարակման համար, այն անվանելով «սխալմունք»: Խմբագրությունում Ասոշիեյթեդ պրես գործակալության թղթակցին ասել են, որ հայտարարությունն ընդունած աշխատակիցը, ըստ երեւույթին, ուշադրություն չի դարձրել, որ Օբամայի անունը հիշատակվում է սպանված ամերիկյան նախագահների շարքում:**

**The Warren Times Observer-ը հրապարակման մասին հայտնել է տեղական ոստիկանությանը եւ ԱՄՆ գաղտնի ծառայությանը: Հայտարարություն տված անձի ինքնությունը բացահայտվել է, սակայն նրա անունը չի հրապարակվում:**

**Նախագահի անվտանգությամբ զբաղվող գաղտնի ծառայությունում հայտարարել են, որ իրենք միջադեպին վերաբերվում են ամենայն լրջությամբ:**

# 98 տարեկանում մահացել է «Տիտանիկի» վերջին ուղեւորուհին



Մեծ Բրիտանիայում կիրակի օրը 98 տարեկան հասակում կյանքից հեռացել է հանրահայտ «Տիտանիկ» շոգենավի վերջին ուղեւորուհին՝ Միլվինա Դինը: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը, վկայակոչելով նրա բարեկամներին:

Վերջին տարիներին Դինը բնակվում էր ծերանոցում՝ Անգլիայի հարավում գտնվող Հեմփշիրի կոմսությունում: «Տիտանիկի» նավաբեկությունից փրկված ուղեւորների մեջ մինչեւ մեր օրերն ապրած միակ անձնավորությունն էր: Աղետյալ նավի 2200 ուղեւորներից հաջողվել է փրկել մոտ 700-ին:

Կյանքի վերջին տարիներին Դինը ֆինանսական դժվարությունների մեջ էր: Նա բավարար դրամ չուներ ծերանոցում իր կեցության ծախսերը հոգալու համար, որոնք կազմում էին ամսական 3 հազար ֆունտ ստեռլինգ:

Դրամ հայթայթելու նպատակով Միլվինա Դինը կազմակերպում էր աճուրդներ, որոնց ընթացքում վաճառքի էին հանվում նրան պատկանած զանազան իրեր: Բացի դրանից, դերասաններ Լեոնարդո դի Կապրիոն եւ Քեյթ Ուինսլեթը 30 հազար նվիրատվություն էին արել ծերանոցի սպասարկումների վճարման համար:

1912 թվականի նավաբեկության օրը Միլվինա Դինը 9 շաբաթական մանկիկ էր. նա «Տիտանիկի» ամենակրտսեր ուղեւորն էր: Հայրը զոհվեց, իսկ ընտանիքի մյուս բոլոր անդամներին հաջողվել է փրկվել:

Բնականաբար, Դինը չի հիշում աղետը: Սակայն, ինչպես ինքն է ասում, «Տիտանիկի» կործանումը ուժգին ազդեցություն է գործել իր կյանքի վրա: Դինը հաճախ պատմում էր, որ եթե «Տիտանիկը» չլիներ, ապա ինքը կմեծանար ԱՄՆ-ում, այլ ոչ թե Մեծ Բրիտանիայում, ուր նրա ընտանիքը ստիպված էր եղել վերադառնալ նավաբեկությունից հետո:

# Կոչումներ, մեդալներ ու պարգեւներ շնորհելու անհրաժեշտության կամ հակառակի մասին

Հայության համար ամենեւին բարդություն չէ արժանի հոբելյարների բանակի ձեւավորումն անգամ՝ հավերժացած տաղանդաշատ հոբելյարները շատ են ու կարծես քիչ չեն մերօրյա վաստակաշատները: Եվ այդ մարդկանց վաստակի արժեւորումն առաջին հերթին հենց մեզ՝ հաջորդներիս ու ժամանակակիցներիս է անհրաժեշտ:

Վերջինը հոբելյանից հոբելյան բարեխղճորեն իրականացնում է երկրի մշակույթի նախարարությունը, տոնից տոն էլ՝ նախագահը: Ժողովուրդն այդ անում է ապրելուն զուգահեռ եւ գիտակցում ժամանակի մեջ:

Ժողովրդի շնորհած կոչումը հիշողությունում պահելն ու հղկելն է, որի առնչությամբ բողոք, անհամաձայնություն, դժգոհություն թույլ չի տալիս ինքը՝ ժամանակը: Սակայն պետական պարգեւների, մրցանակների ու մեդալների հանձնմանն ամեն անգամ հաջորդում է դժգոհության ու քննադատության ալիք, որին մասնակից են դառնում նաեւ նրանք, ովքեր արժանանում են այդ պարգեւներին:

Նմանատիպ արձագանքի արժանացավ նաեւ Հանրապետության տոնի կապակցությամբ ՀՀ շքանշաններով ու մեդալներով պարգեւներ հանձնելու մասին մայիսի 26-ին երկրի նախագահի ստորագրած հրամանագիրը: Ասելիքի առանցքն այն էր, որ պարգեւներ տրվում են ոչ թե մասնագիտական բնագավառում ունեցած վաստակի, այլ քաղաքական կողմնորոշման համար:

Պարգեւներին արժանացած անձինք զերծ մնացին գնահատական տալուց եւ բավարարվեցին իրենց գործով նկատված լինելու համար շնորհակալություն հայտնելով: Նունն արեց նաեւ արվեստի վաստակավոր գործչի կոչմանն արժանացած ռեժիսոր, «Գոյ» թատրոն-լաբորատորիայի գեղարվեստական ղեկավար Արմեն Մազմանյանն ու ընդգծեց. «Իհարկե հաճելի է գործով նկատված լինելը, ինչը, բնականաբար, շնորհակալության զգացողություն է առաջացնում, բայց ես կգերադասեի աշխատանքի իմ գրանցված իրավունքը՝ «Գոյ» թատրոնի լիակատար գործունեությունն իրացնելու հնարավորություն ստանալ»:

«Տաղարան» համույթի գեղարվեստական ղեկավար Դանիել Երաժիշտը համոզմունք հայտնեց. «Ավելի լավ է մարդն առանց կոչման, քան կոչումն առանց մարդու: Մի՞թե մարդուն առողջ կամ երջանիկ լինելու համար կոչում ու մեդալ շնորհելու հարկ կա: Նույնկերպ հարկ չեմ տեսնում նաեւ տաղանդի, շնորհի դրսեւորումը կոչումով առանձնացնելու: Անհրաժեշտություն կա աշխատելու, անելու այն, ինչ անհրաժեշտ ես համարում, իսկ իրական տաղանդ ունեցողը հենց այդպես էլ վարվում է: Սա չի նշանակում, թե կոչումներ, պարգեւներ շնորհելը վատ է, պարզապես իմ սերնդի աչքում դա արժեզրկված ինստիտուտ է՝ շնորհիվ Լեոնիդ Իլյիչի, որն ինքն իրեն հազար ու մի մեդալ ու կոչում էր շնորհում»:

«Կոչումների, պարգեւների համակարգն, ըստ իս մեր հասարակությունում խմբերի է բաժանում ստեղծագործողներին: Ինքս էլ կոչում ունեմ եւ գիտեմ, որ անկախ ամեն ինչից դրա լինելը որոշակի երախտագիտություն է առաջացնում շնորհողի հանդեպ, դա ծանր բան է, լավ է ազատ լինել այդ բեռից: Կարծում եմ՝ մեր ձեւավորվող հասարակության ըմբռնողության սահմաններում դեռեւս անօգտակար է այդ ինստիտուտը: Մյուս կողմից էլ քիչ չեն նրանք, ովքեր մարդու վաստակը հենց դրանով են համարում կարեւորված կամ ոչ ու կողմնորոշվում են մարդու անունից առաջ դրվող կոչումների քանակով: Այնուամենայնիվ չեմ կարող ժխտել, որ կոչումները մեզանում տրվում են նաեւ տվյալ անձի քաղաքական կողմնորոշման հիման վրա», կարծիք հայտնեց «Ագուլիս» մանկական տիկնիկային թատրոնի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար Երվանդ Մանարյանը, որը, վստահաբար, այն անձանցից է ում ներկայացնելիս անունը միայն բավական է:

Զրուցակիցներս եկան մի ընդհանուր եզրակացության, որ կոչում շնորհելուց առավել կարեւոր է դրանք ստանալու արժանի մարդկանց գործունեության համար համապատասխան դաշտի ապահովումը:

**ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Մշակութային կյանքն Արցախում աշխուժացման լավ հեռանկարներ ունի

**Երեկ ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Լեռնիկ Հակոբյանն իր մոտ հրավիրած մամլո ասուլիսի ժամանակ գոհունակություն է հայտնել ՀՀ երիտասարդության հարցերի նախարարի հետ մի քանի օր առաջ ստորագրած համաձայնագրի առթիվ: Լ. Հակոբյանի խոսքով, պայմանավորվածություն է ձեռք բերվել շրջկենտրոններում երիտասարդական կենտրոնների ստեղծմանը համապարփակ աջակցելու մասին:**

**Կարեւորելով երիտասարդական կառույցների դերը, արդեն իսկ հունիս ամսից սկսած, ԼՂՀ կառավարությունը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերելու երիտասարդական ՀԿ-ներին: Ըստ ներկայացված ծրագրերի՝ ֆինանսավորվելու են բոլոր կազմակերպությունները, ինչն աննախադեպ է թե՛ ծավալներով, եւ թե՛ առաջարկված ուղղություններով: Դա դրամաշնորհ չէ, նշեց նախարարը, այլ ամբողջ ծրագրերի վրա հիմնված օգնություն: ՄԵ նախարարին առընթեր ստեղծվել է փորձագիտական հանձնաժողով, որի երաշխավորություններով էլ հաստատվել է ֆինանսավորումը: Այն կազմակերպությունները, որոնք նպատակային կօգտագործեն հատկացված միջոցները, հետագայում ավելի մեծ չափերով ֆինանսավորում կստանան, խոստացավ նախարարը, հավելելով, որ տրամադրված միջոցները փոշիացնող ՀԿ-ներն, ընդհակառակը, կզրկվեն հերթական օժանդակությունից:**

**Երեւանում Լեռնիկ Հակոբյանը հանդիպում է ունեցել նաեւ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ՝ պայմանավորվելով սփյուռքի ծրագրերում Արցախը եւս ընդգրկելու շուրջ: Դրա անհրաժեշտությունը կա, նշեց Լ. Հակոբյանը՝ ընդգծելով արտերկրում Ղարաբաղը լայնորեն ներկայացնելու կարեւորությունը:**

**Անդրադառնալով մշակութային համագործակցության մյուս ծրագրերին, նա տեղեկացրեց, որ ոչ միայն արցախյան մշակութային խմբերն են պարբերաբար հանդես գալու Հայաստանում, այլեւ ակտիվանալու են Հայաստանի Հանրապետությունում հայտնի համույթների ու թատերախմբերի այցելությունները Ղարաբաղ:**

**Նախարարի խոսքով, ՀՀ մշակույթի նախարարության հետ պայմանավորվածության շրջանակում կիրականացվի ուշագրավ մի ակցիա: Ստացված միջոցները կուղղվեն Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի շենքի վերանորոգմանը: Թատրոնի նորոգման համար միջոցներ կտրամադրի նաեւ ԼՂՀ կառավարությունը:**

**«Ազգի» այն հարցին, թե ինչ հեռանկար ունի հանրապետության շրջկենտրոններում մշակութային օջախների հանձնումը վարչակազմերի ենթակայությանը, Լեռնիկ Հակոբյանն ասաց, որ դա իրավիճակի հրամայականն է: Կառավարությունը նման որոշում է ընդունել, հաշվի առնելով ուղղակի ենթակայության արդյունավետությունը: Առայժմ դա արվել է միայն շրջկենտրոններում, իսկ հետագայում նախատեսվում է համայնքների ենթակայությունից հանել նաեւ գյուղական ակումբները, որի նպատակը գյուղական բնակավայրերում մշակութային կյանքի աշխուժացումն է: Պատրաստ է նաեւ Շուշիի Խանդամիրյանի անվան թատրոնը մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության տնօրինմանը հանձնելու մասին որոշման նախագիծը, տեղեկացրեց նախարարը:**

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «Քրիստոնյա Հայաստան» ֆիլմը Ռոդ Այլենդում

Պրովիդենսի (Ռոդ Այլենդ) Կոլոմբոս թատրոնում տեղի Սբ Սահակ եւ Սբ Մեսրոպ հայկական եկեղեցու մշակութային հանձնախմբի նախաձեռնությամբ եւ կազմակերպությամբ տեղի է ունեցել «Քրիստոնյա Հայաստան» ֆիլմի (գլխավոր դերում՝ Վլադիմիր Մսրյան) պրեմիերան, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի մասին պատմող ֆիլմի անգլերեն տարբերակը ցուցադրվել է ժամը 15.00-ին, իսկ հայերեն տարբերակը՝ ժամը 17.00-ին: Ներկաները առիթ են ունեցել տեսակցելու նաեւ ֆիլմի պրոդյուսեր Արսեն Ասլանյանի հետ:

**Հ. Ծ.**




ՆՈՐ ԳԻՐՔ

# Էդվարդ Միրզոյանի վոկալ ստեղծագործությունները՝ մեկ ժողովածուի մեջ

**Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հրատարակչությունը տոլսահայ անվանի կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկի աջակցությամբ լույս է ընծայել Էդվարդ Միրզոյանի վոկալ ստեղծագործությունների ժողովածուն: Գիրքն ընդգրկում է նշանավոր կոմպոզիտորի մեներգային եւ խմբերգային ստեղծագործությունները:**

**«Վաղեմի բարեկամ Շահան Արծրունու շնորհիվ ճանաչեցի, մտերմացա, հարազատացա կոմպոզիտոր Գարամանուկ Սիրվարդի հետ, որի շնորհիվ ստեղծվեց այս ժողովածուն», գրքի առաջաբանում երախտագիտությամբ գրել է մատեսրն:**




**Արդի հայ կոմպոզիտորների նահապետ Էդվարդ Միրզոյանի կյանքի եւ ստեղծագործական գործունեության մասին գրքի նախաբանում Շահան Արծրունին հանգամանորեն ներկայացրել է կոմպոզիտորի կենսագրությունն ու գրել է. «Միրզոյանի ստեղծագործական ժառանգությունը համեմատաբար փոքր է, սակայն մեծապես ներկայանալի, որը նուրբ քնարականությունը միավորում է ուժեղ դրամատիզմի հետ: Նրա ստեղծագործությունները կարելի է բնորոշել որպես նոր դասական՝ ձեւային կառուցվածքի եւ հնչյունային ձեւավորման շնորհիվ: Նրա որոշ երգերը, լարային կվարտետը, թավջութակի համար գրված սոնատը, սիմֆոնիան լարայինների եւ լիտավրների համար, էպիտաֆան, հեղինակին աչքի ընկնող տեղ են ապահովել միջազգային երաժշտական աշխարհում»:**

**Գիրքն ընդգրկում է Էդվարդ Միրզոյանի վոկալ երկերը՝ թե՛ մեներգային, թե՛ երգչախմբային: Միրզոյանը մեղեդի հորինելու մեջ բացառապես օժտված կոմպոզիտոր է: Նրա կանտիլենաները հասկանալի են իրենց գեղեցկությամբ եւ քնքշությամբ: Դաշնամուրային մասի կառուցվածքը մոտենում է նվագախմբայինին, այն ակտիվ է, ինչպես եւ արձագանքող: Տեքստերի ընտրության հարցում Միրզոյանի ճաշակը գերազանց է, երաժշտության եւ բանաստեղծության միջեւ հարաբերակցության արդյունքում ստացվում է հրաշալի ներդաշնակություն: Այստեղից է երաժշտագետների ու գործընկերների գնահատականը Էդվարդ Միրզոյանի գործին:**

**Գրքում ուշագրավ պատմություններ կան կոմպոզիտորի ստեղծագործական կյանքից: Դրանցից մեկում ասվում է. «Էդվարդ Միրզոյանի առաջին ռոմանսը՝ «Ասում են թե», գրվել է 1939-ի աշնանը: Ավետիք Իսահակյանի (1875-1957) բանաստեղծությունն արտահայտում է Միրզոյանի զգացմունքները մի 16-ամյա աղջկա հանդեպ: Այն արտահայտում է կոմպոզիտորի հիասթափությունը, քանի որ նրա սերն անպատասխան էր մնացել: Այս ռոմանսը Էդվարդ Միրզոյանի լավագույն վոկալ ստեղծագործություններից է, հոգեբանական պոեմ է՝ դրամատիզմով ու հուզականությամբ լեցուն»:**

**Մեկ այլ ուշագրավ պատմություն կապված է Եղիշե Չարենցի (1897-1967) եւ նրա բանաստեղծության հիման վրա Միրզոյանի երաժշտական հորինման հետ: 1977-ին բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ մրցույթ է հայտարարվել Չարենցի խոսքերով գրված լավագույն երգի համար: Բազմաթիվ մասնակիցների հետ Միրզոյանը նույնպես ներկայացրել է մի գործ՝ «Հիմա հիշում եմ» մի բանաստեղծություն, որը Չարենցը գրել է ընդամենը 23 տարեկանում:**

**Մրցույթում երգը կատարել է տենոր Գեղամ Գրիգորյանը՝ Միրզոյանի նվագակցությամբ, եւ շահել առաջին մրցանակ: Գիրքը հետաքրքրական եւ արժեքավոր է նրանով, որ պատմում է կոմպոզիտորի եւ մարդու մասին:**

**ԱՐՓԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ**

# Բարեգործական համերգ

Այս տարվա ապրիլի 20-ին ամբողջովին այրվեց Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում գտնվող «Շլոս Արենբերգ» ապարանքը՝ միջազգային զալցբուրգյան սեմինարների կենտրոնը, որտեղ ի թիվս աշխարհի շատ երկրների ներկայացուցիչների, նաեւ հայաստանցի շուրջ 400 բժիշկներ են վերապատրաստվել: Հրո ճարակ դարձած այս հնաբույր կառույցի շինվերանորոգման աշխատանքներին նյութական աջակցություն բերելու նպատակով անցած շաբաթավերջին Երեւանի պետական բժշկական համալսարանի «Մեծ դահլիճում» տեղի ունեցավ բարեգործական համերգ, որը համատեղ նախաձեռնել էին ՀՕՖ-ի Բժշկական շրջանավարտների ասոցիացիան, «Զալցբուրգի միջազգային սեմինարներ Հայաստանում» կազմակերպությունը եւ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը: Երեւանի պետական բժշկական համալսարանը հովանավորեց Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի ելույթը:



Համերգին ներկա էր նաեւ «Զալցբուրգի միջազգային բժշկական սեմինարներ» ծրագրերի տնօրեն պրոֆ. Վոլֆգանգ Աուլիցկին, որը Հայաստան էր ժամանել ընդամենը մեկ օրով՝ միջոցառմանը մասնակցելու նպատակով: Պրոֆ. Աուլիցկին հուզված էր հայ գործընկերների նման վերաբերմունքից եւ խոստացավ Արենբերգ դղյակի վերականգնելիք սրահներից մեկն անվանել «Հայաստան»:

**ՀՕՖ-ի լրատվական կենտրոն**

## Հայտարարություն

**2009-ի հունիսի 3-ին, ժամը 18.00-ին** Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան համերգասրահում տեղի կունենա սփյուռքահայ մտավորական, մատենագետ, հասարակական գործիչ, վաստակաշատ մանկավարժ ու խմբագիր, բեյրութաբնակ

***Ժիրայր Դանիելյանի***

բազմաշխատ գործունեության գնահատանքի հանդիսությունը:

AZG NEW 7.QXD 6/1/2009 9:18 PM Page 1



# Աշխարհի չեմպիոն եւ լավագույն բռնցքամարտիկ

## ՀՀ հավաքականը թիմային հաշվարկով 2-րդն է

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում վերջնագիծը հատեց բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը: Հայաստանի պատանեկան հավաքականը բավական հաջող ելույթներ ունեցավ: Ռինգ դուրս եկած 13 բռնցքամարտիկներից 7-ն արժանացան մեդալների (1 ոսկե, 2 արծաթե, 4 բրոնզե): Թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը զբաղեցրեց 2-րդ տեղը` զիջելով միայն Ռուսաստանի ընտրանուն: Վերջինս նվաճեց 5 ոսկե եւ 4 բրոնզե մեդալ:



ՖՈՏՈԼՈՒՐ

Մրցումների վերջին օրը կայացած եզրափակիչ մենամարտերում 3 հայ բռնցքամարտիկներից միայն Կորյուն Սողոմոնյանին ուղեկցեց հաջողությունը: Մինչեւ 46 կգ քաշային կարգում Կորյունն իր 5-րդ մենամարտն էլ վստահ անցկացրեց եւ 10-4 հաշվով հաղթելով հնդիկ բռնցքամարտիկ Սանդիպին, արժանիորեն նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Հատկանշական է, որ քաշային այս կարգի բռնցքամարտիկներին պարգեւատրեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Կորյուն Սողոմոնյանը ճանաչվել էր նաեւ առաջնության լավագույն բռնցքամարտիկ: Մրցանակը նրան հանձնեց ԱԻԲԱ-ի նախագահ Վուն:

Ցավոք, մեր մյուս երկու բռնցքամարտիկներին չհաջողվեց շարունակել Կորյունի սկսած հաղթարշավը: Մինչեւ 54 կգ քաշային Ջոնիկ Տոնոյանը 3-5 հաշվով զիջեց Էռնեստո Վալդեսին: Իռլանդացի Յոզեֆ Վարդի հետ մենամարտում Հայկ Խաչատրյանին չհաջողվեց լուրջ դիմադրություն ցույց տալ: Մրցակցի առավելությունն ակնհայտ էր, իսկ երբ հայ բռնցքամարտիկը 2 անգամ նոկդաունում հայտնվեց, 3-րդ ռաունդում մրցաշարը դադարեցվեց ու հաղթանակը շնորհվեց իռլանդացուն:

Մեծ հաջողության հասան ռուսաստանցի բռնցքամարտիկները: Եզրափակիչում հանդես եկած 5 բռնցքամարտիկներն էլ հաղթեցին ու նվաճեցին աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ոսկե մեդալների արժանացան Սերգեյ Սոբլինսկին (50 կգ), Մագոմեդ Աբդուլամագոմեդովը (63 կգ), Անդրեյ Եգորովը (66 կգ), Իդրիս Շախմանովը (75 կգ) եւ գերծանրքաշային Հասան Գիմբատովը: Քաշային մյուս կարգերում ուժեղագույններ ճանաչվեցին գերմանացի Թեո Կրեչլոկը (48 կգ), բելառուսցի Իվան Բարանչուկը (52 կգ), կուբացի Առլեն Լոպեսը (57 կգ), ուկրաինացի Օլեգ Նեկլյուդովը (60 կգ) եւ ուզբեկ Միրզոբեկ Հասանովը (80 կգ):

# Գոլառատ հանդիպումներ

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 10-րդ տուրն արդյունավետ ստացվեց: Չորս խաղում խփվեց 16 գնդակ, երկու խաղ ավարտվեց խոշոր հաշվով: Միայն Աբովյանում կայացած «Արարատ»-«Միկա» հանդիպումն էր սակավագոլ: 2-րդ րոպեին «Միկայի» հարձակվող Բոտի Դեմելը գրավեց «Արարատի» դարպասը, ինչն էլ որոշեց հանդիպման ելքը: «Արարատը» 10-րդ անընդմեջ պարտությունը կրեց եւ առայժմ միավոր չի վաստակել:**

**Ամենագոլառատ խաղը «Բանանցի» եւ «Շիրակի» մրցավեճն էր, որում 6 գնդակ խփվեց: «Բանանցը», որ նախորդ երկու խաղերում պարտվել էր, պարզապես ջախջախեց «Շիրակին» (5-1): Դաշտի տերերից աչքի ընկան Արտակ Դաշյանը, Արտակ Օսեյանը, Յարեմա Կավացիվը, Ժորա Ստեփանյանն ու Գեւորգ Կ.Օհանյանը: «Շիրակից» միակ գոլի հեղինակը թիմի ռմբարկու Անդրանիկ Բարիկյանն էր, որն իր 6-րդ գնդակը խփեց: Ֆուտբոլասերներին տեղեկացնենք, որ արդեն 2-րդ հանդիպումն է, ինչ «Շիրակից» հեռացել է գլխավոր մարզիչ Ժորա Բարսեղյանը եւ գյումրեցիների գործողությունները ղեկավարում է վերջերս ակտիվ ֆուտբոլին հրաժեշտ տված նախկին շիրակցի Վարդան Բիչախչյանը: Նրա գլխավորությամբ շիրակցիները խոշոր հաշվով 2-րդ պարտությունը կրեցին: Հիշեցնենք, որ նախորդ տուրում «Շիրակը» Գյումրիում 0-4 հաշվով զիջել էր «Միկային»:**

**«Կիլիկիայի» հետ խաղում «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը որոշել էր մեկնարկային կազմում չընդգրկել թիմի ռմբարկու Հենրիխ Մխիթարյանին, Էմանուել Մբոլային, Արթուր Եդիգարյանին ու դարպասապահ Գրիգոր Մելիքսեթյանին: Չնայած դրան, «Փյունիկը» մրցակցի նկատմամբ առավելության հասավ: Մինչեւ ընդմիջման գնալը Արտակ Եդիգարյանն ու Արտակ Ալեքսանյանը 2 անգամ գրավեցին մրցակցի դարպասը` բացելով իրենց գոլերի հաշիվը բարձրագույն խմբում: Ճիշտ է, ընդմիջումից հետո Տիգրան Ղարաբաղցյանը կրճատեց հաշվի տարբերությունը, սակայն խաղավերջում Միհրան Մանասյանը խփեց 3-րդ գոլը` ամրապնդելով թիմի հաղթանակը` 3-1:**

**«Ուլիսը» բարձրագույն խմբում իր ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնեց` 5 անպատասխան գնդակ խփելով «Գանձասարի» դարպասը, որի ղեկը նախորդ տարում ստանձնել էր Սլավա Գաբրիելյանը: «Ուլիսից» գոլերի հեղինակներ դարձան Արտյոմ Ադամյանը, Գագա Թբիլաշվիլին, Դավիթ Գրիգորյանը եւ Արա Հովհաննիսյանը: Մեկ գնդակ էլ սեփական դարպասն անցկացրեց «Գանձասարի» պաշտպան Դավիթ Խանիշվիլին:**



ՖՈՏՈԼՈՒՐ

**Հայաստանի երիտասարդական հավաքականի առաջիկա ընտրական մրցախաղերի հետեւանքով 11-րդ տուրի «Միկա»-«Բանանց» եւ «Փյունիկ»-«Արարատ» հանդիպումները հետաձգվել են:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 10 | 9 | 1 | 0 | 27-6 | 28 |
| 2. Միկա | 10 | 7 | 2 | 1 | 20-8 | 23 |
| 3. Բանանց | 10 | 7 | 0 | 3 | 18-11 | 21 |
| 4. Ուլիս | 10 | 6 | 1 | 3 | 15-8 | 19 |
| 5. Շիրակ | 10 | 3 | 1 | 6 | 11-23 | 10 |
| 6. Կիլիկիա | 10 | 3 | 0 | 7 | 10-17 | 9 |
| 7. «Գանձասար» | 10 | 2 | 1 | 7 | 6-19 | 7 |
| 8. «Արարատ» | 10 | 0 | 0 | 10 | 3-18 | 0 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Հենրիխ Մխիթարյան | «Փյունիկ» | 11 |
| Բոտի Դեմել | «Միկա» | 8 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 6 |
| Արամ Ոսկանյան | «Միկա» | 5 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 4 |
| Արթուր Քոչարյան | «Ուլիս» | 4 |
| Միհրան Մանասյան | «Փյունիկ» | 4 |
| Արտակ Դաշյան | «Բանանց» | 4 |
| Տիգրան Ղարաբաղցյան | «Կիլիկիա» | 4 |

# Վալուեւ-Չագաեւ մենամարտը կրկին հետաձգվեց

**Մայիսի 30-ին Հելսինկիում նշանակված Վալուեւ-Չագաեւ մենամարտը չկայացավ: Ֆինլանդիայի բռնցքամարտի ֆեդերացիան ուզբեկ բռնցքամարտիկ Ռուսլան Չագաեւին բժշկական արտոնագիր չտրամադրեց մենամարտն անցկացնելու համար: Թեեւ Ֆինլանդիայի օրենսդրությունն արգելում է անձի վերաբերյալ բժշկական տեղեկատվության տրամադրումը, Չագաեւի ճամբարից ստացված լուրերի համաձայն, WBA-ի վարկածով գերծանրքաշային կարգի ժամանակավոր չեմպիոնի արյան անալիզում հայտնաբերվել են հեպատիտի ախտանշաններ: Մրցամարտի կազմակերպիչներն անորոշ ժամանակով հետաձգել են այն: Այժմ WBA-ի ղեկավարությունը 7 օրվա ընթացքում պետք է որոշում կայացնի ստեղծված իրավիճակի վերաբերյալ:**

**Բնականաբար, Ռուսլան Չագաեւը դժգոհ է մնացել նման որոշումից: Նա պնդում է, որ ինքն առողջ է եւ պատրաստ էր Վալուեւի հետ մենամարտին: Երկու բռնցքամարտիկներին էլ ոչ մի կերպ չի հաջողվում միմյանց հետ ուժերը չափել ու վերջապես որոշել, թե ով է իրականում ուժեղագույնը WBA-ի վարկածով գերծանրքաշային կարգում: Նախորդ երկու մենամարտերը չէին կայացել Ռուսլան Չագաեւի հիվանդության ու վնասվածքի պատճառով:**

ՇԱԽՄԱՏ

# Ռինատ Ջումաբաեւը Գյումրու մրցաշարի հաղթող

## Չիբուխչյանին կշնորհվի գրոսմայստերի կոչում

**Երեւանից դուրս շախմատային բարձր կարգի մրցաշարերի անցկացումը հույժ գնահատելի գաղափար է, որը Հայաստանի շախմատի ֆեդերացիան եւ շախմատային ակադեմիան երկրորդ տարին անընդմեջ իրականացնում են Շիրակի մարզկենտրոն Գյումրիում: Վերջինիս ընտրությունը թերեւս պայմանավորված է քաղաքի շախմատային ավանդույթներով եւ այստեղ դրանց հետագա զարգացումը խթանելու ցանկությամբ:**

**Մայիսի 23-31-ը անցկացված, ՖԻԴԵ-ի դասակարգմամբ 11-րդ կարգի «Գյումրի-2009» միջազգային մրցաշարը, որի 10 մասնակիցների թվում էին 5 գրոսմայստերներ եւ 4 միջազգային վարպետներ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից ու Ղազախստանից, անցավ լարված եւ հետաքրքիր մարզական պայքարում: Արդեն չորրորդ տուրից դառնալով միանձնյա առաջատար եւ այլեւս չզիջելով դիրքերը, 9 հնարավորից վաստակած 7 միավորով մրցաշարի հաղթողի կոչումը արժանիորեն նվաճեց ղազախստանցի միջազգային վարպետ Ռինատ Ջումաբաեւը: Չկրելով ոչ մի պարտություն, նա հինգ պարտիա ավարտեց հաղթանակով, իսկ չորսում միավորը կիսեց մրցակցի հետ: Ռինատի հաջողությունը կրկնակի էր, որովհետեւ նա նաեւ արդեն երրորդ անգամ լրացրեց գրոսմայստերական նորմա:**

**Այդպիսի հաջողության հասավ նաեւ մեր միջազգային վարպետ Արթուր Չիբուխչյանը, որը վերջին տուրում խաղաղ դաշն կնքելով Արա Մինասյանի հետ եւ հավաքելով բաղձալի 6 միավորը, ոչ միայն մրցաշարում երկրորդը ճանաչվեց, այլեւ իր համար ապահովեց միջազգային գրոսմայստերի պատվավոր կոչումը: Մրցաշարի փակման ժամանակ գոհունակություն արտահայտելով այս առիթով, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը մասնավորապես նկատեց, որ Արթուրը ոչ միայն լավ շախմատիստ է, այլեւ Հայաստանի լավագույն մարզիչներից մեկը: Չիբուխչյանը եւս չկրեց ոչ մի պարտություն, նա երեք պարտիայում հաղթեց, վեցն ավարտեց ոչ-ոքի:**

**Մրցաշարում երրորդ տեղի հարցը եւս որոշվեց վերջին տուրում: Ի դեպ, այս տուրի մնացած չորս պարտիաներն էլ արդյունավետ ելք ունեցան: Հաղթելով մեր պատանի գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանին, մրցաշարում ամենաբարձր անհատական վարկանիշն ունեցող, Գյումրիում երկրորդ տարին անընդմեջ հանդես եկող վրացի գրոսմայստեր Թամազ Գելաշվիլին 5,5 միավորով երրորդ-չորրորդ տեղերը կիսեց գյումրեցի Արա Մինասյանի հետ: Լրացուցիչ գործակիցների հաշվարկով երրորդ տեղը գրավեց Գելաշվիլին: Մինասյանի չորրորդ տեղը եւս մրցանակային էր:**

**Պավել Պանկրատովը (ՌԴ) եւ Գեւորգ Հարությունյանը 4-ական միավորով կիսեցին հինգերորդ-վեցերորդ, Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Սամվել Տեր-Սահակյանը` 3,5-ական միավորով յոթերորդ-ութերորդ տեղերը: Վրաստանցի մեր հայրենակից, գրոսմայստեր Դավիթ Հարությունյանի եւ գյումրեցի միջազգային վարպետ Դավիթ Քալաշյանի արդյունքն էր 3-ական միավոր:**

**Միջազգային մրցաշարի հանդիսավոր փակման ժամանակ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, շախմատային ակադեմիայի նախագահ Սմբատ Լպուտյանը շնորհակալություն հայտնելով Շիրակի մարզպետարանին, տեղի տարբեր կառույցներին, կազմակերպություններին եւ առանձնապես Գյումրու քաղաքապետարանին` քաղաքում շախմատային այս կարեւոր իրադարձության կայացմանն աջակցության համար, նշեց. «Այսպիսի մրցաշարերից առաջ է գալիս այն մթնոլորտը, որտեղ հնարավոր է զարգացնել շախմատը, եւ այստեղից կարող են դուրս գալ մեծ շախմատիստներ»: Այս իմաստով պատահական չէր նաեւ Աճեմյանի անվան թատրոնի նույն շենքում Շիրակի մարզի պատանեկան շախմատային փառատոնի զուգահեռ անցկացումը 220-ից ավելի մասնակիցներով, որի արդյունքներն ամփոփվեցին միջազգային մրցաշարի հետ: Վերջինիս մասնակիցները եւս մրցանակներ էին սահմանել աչքի ընկած պատանի շախմատիստների համար:**

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Հրաժեշտ «Չելսիին» Անգլիայի գավաթով

**Հոլանդացի մասնագետ Գուս Հիդինգն Անգլիայի գավաթի նվաճումով հրաժեշտ տվեց «Չելսիին», որի ղեկը ստանձնել էր կարճ ժամանակով: Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում Հիդինգի սաները 2-1 հաշվով առավելության հասան «Էվերտոնի» նկատմամբ: Արդեն 25-րդ վայրկյանին «Էվերտոնի» հարձակվող Սաան բացեց հաշիվն` Անգլիայի գավաթի եզրափակիչ հանդիպումներում խփելով ամենաարագ գոլը: Սակայն հետագայում Դրոգբան ու Լեմփարդը 2 անգամ գրավեցին լիվերպուլցիների դարպասն ու ապահովեցին «Չելսիի» հաղթանակը: «Չելսին» իր պատմության մեջ 5-րդ անգամ դարձավ Անգլիայի գավաթակիր` այդ ցուցանիշով հավասարվելով «Էվերտոնին»:**



# Պատվավոր մրցանակը «Վերդերին»

Բրեմենի «Վերդերը» նվաճեց Գերմանիայի գավաթը` եզրափակիչում 1-0 հաշվով պարտության մատնելով «Բայերին»: Հանդիպման ելքը վճռեց 58-րդ րոպեին Օզիլի խփած միակ գնդակը: Վերջին անգամ «Վերդերը» Գերմանիայի գավաթակիր էր դարձել 2004-ին, իսկ ահա «Բայերն» ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում դեռեւս չի ճաշակել գավաթը նվաճելու բերկրանքը:

# Ալդոնինի վճռորոշ գոլը

Բավական համառ ու անզիջում մրցապայքարում անցավ ՌԴ գավաթի եզրափակիչ հանդիպումը Մոսկվայի ԲԿՄԱ-ի եւ Կազանի «Ռուբինի» միջեւ: Թեեւ ԲԿՄԱ-ն 76 րոպե խաղում էր 10 հոգով, սակայն կարողացավ առավելության հասնել մրցակցի նկատմամբ ու 5-րդ անգամ նվաճեց երկրի գավաթը: Գավաթի ելքը վճռվեց հանդիպման ավելացված ժամանակում Ալդոնինի խփած միակ գոլի շնորհիվ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW 8.QXD 6/1/2009 10:39 PM Page 1



ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Զեղչեր ավանդական եւ ճգնաժամով պայմանավորված

Տնտեսական ճգնաժամը նախ եւ առաջ արտահայտվում է պահանջարկի անկմամբ եւ սպառման համընդհանուր նվազմամբ: Այսինքն, մարդիկ եւ կազմակերպությունները սկսում են ավելի մեծ խնայողություն ցուցաբերել եւ ավելի քիչ գնումներ կատարել: Հասկանալի է, որ դա շղթայական ռեակցիա է առաջացնում բիզնեսում՝ իջեցնելով նրա շրջանառությունն ու իրացման ծավալները: Ստեղծված իրավիճակում բիզնեսը ստիպված է ելքեր փնտրել: Կախված սպառման նվազման ծավալներից՝ անխուսափելի է որոշ սուբյեկտների գործունեության դադարեցումը: Իսկ մնացածները դիմում են տարբեր քայլերի՝ օրինական կամ ապօրինի: Իջեցնում են ապրանքների կամ ծառայությունների գները, նվազեցնում ծախսերը, փորձում կիրառել նոր տեխնոլոգիաներ եւ, իհարկե, ձգտում ավելի մեծացնել ստվերային շրջանառությունը (ինչն առավել վառ արտահայտված է մեր երկրում):

Ճգնաժամի պայմաններում լայնորեն կիրառվում են նաեւ զեղչերը: Դրանք քաղաքակիրթ աշխարհում կիրառվում են ոչ միայն ճգնաժամի ժամանակ: Զեղչերը եւ համընդհանուր վաճառքը վաղուց ընդունված միջոց են հատկապես սեզոնային նոր ապրանքատեսակների ձեռքբերման ժամանակ, երբ առեւտրի օբյեկտին հարկ է լինում ամբողջությամբ ազատվել մնացած ապրանքներից՝ նորի ներկայացման եւ վաճառքի համար: Հայաստանում մինչեւ վերջին տարիները գերիշխում էր չարչիական առեւտրի մոդելը, որտեղ զեղչերի մասին խոսակցությունները առեւտրականների կամ սպասարկման օբյեկտների սեփականատերերի համար անձնական վիրավորանքին համարժեք բան էին: Բարեբախտաբար, այսօր արդեն բիզնեսի բազմաթիվ ոլորտներում զեղչերը դարձել են անբաժանելի մասնիկ:

Զեղչերը Հայաստանում առաջինը սկսեցին կիրառել կենցաղային տեխնիկայի եւ էլեկտրոնիկայի սարքավորումների վաճառքով զբաղվող, բոլորիս հայտնի 2 խոշոր խանութները: Դրա շնորհիվ, վերջին 5-6 տարիներին, հատկապես Նոր տարվան նախորդող ամսին, այդ ընկերությունների վաճառքի ծավալներն աննախադեպ ավելանում էին: Ինչը օրինակ դարձավ նաեւ նույն բիզնեսով զբաղվող այլ ընկերությունների համար: Եվ պետք է ասել, որ այս ոլորտն իր տարատեսակ զեղչերի կիրառումով ամենակայացածն է: Դրան նպաստեց նաեւ սպառողական վարկերի եւ էլեկտրոնային ապրանքների ձեռքբերման բումը, որ Հայաստանն ապրում էր նախորդող մի քանի տարիներին:

Հետագայում զեղչերը տարածվեցին նաեւ բնակարանների կահավորման, սանտեխնիկայի, խողովակների, շինանյութերի եւ այլ անհրաժեշտ պարագաների վաճառքի մասնագիտացված խանութների, ապա նաեւ հագուստ, կոշիկ վաճառող եւ այլ խանութների, սպասարկման ծառայությունների վրա:

Այս տարին առավել քան առատ է զեղչերով, ինչի պատճառն, ինչպես արդեն նշեցինք, ճգնաժամն էր: Դրանք այժմ կիրառվում են գրեթե ամենուրեք՝ սկսած էլեկտրոնիկայից եւ շինանյութերից, մինչեւ անգամ սննդամթերքի վրա: Համակարգիչների վաճառքով զբաղվող խանութների ցանցը կիրառում է 5 տոկոս զեղչ, գինիների մասնագիտացված խանութ սրահը՝ գինիների եւ կոնյակների 5-7 տոկոս զեղչ, ատամնաբուժական պոլիկլինիկան, ապակյա սպասքի, սրբիչների, անկողնու սպիտակեղենի, ներքնազգեստների խանութը, տնային ձեւավորման խանութ սրահը, սուշի բարը, թանկարժեք օծանելիքի խանութը՝ 10-ական տոկոս զեղչ, հարսանյաց ծառայությունների խանութ-սրահը՝ 15 տոկոս զեղչ, եվրոդռներ եւ պատուհաններ վաճառող խանութը՝ 15 տոկոս զեղչ՝ գումարած նվեր, խոհանոցային սպասքի խանութը, նորածիններին անհրաժեշտ պարագաների խանութը՝ 20-ական տոկոս զեղչ, վարագույրների եւ ծածկոցների խանութ-սրահը՝ 16-25 տոկոս զեղչ: Կարաոկե ակումբը զեղչի հետաքրքրական տարբերակ է առաջարկում՝ անվճար մուտք եւ 3 երգ անվճար: Ժամանցային բիզնեսով զբաղվող կազմակերպության առաջարկն է 1 ժամ խաղալու դեպքում 20 րոպե անվճար խաղալու հնարավորություն եւ 10 տոկոս զեղչ բոլոր ծառայությունների համար: Ջրային զվարճանքների հայտնի ընկերության զեղչը եւս յուրահատուկ է՝ ընտանիքով հանգստի դեպքում ջրային ավազանից երկու երեխաները օգտվում են անվճար: Այս շարքը կարելի է երկար շարունակել:

Թեեւ զեղչային վաճառքն ու սպասարկումն արդեն դառնում են ավելի կիրառվող եւ ընդունելի բիզնեսի համար, բայց այս երեւույթն ի չարս գործածողներ էլ կան: Օրինակ՝ էլեկտրոնիկայի վաճառքի խանութներից մեկը վաղօրոք հայտարարել էր սպասվող զեղչերի մասին, բայց երբ դրանք սկսեցին կիրառվել, ուշադիր գնորդները նկատեցին, որ ապրանքների գները չեն փոխվել: Դրանց կողքին հայտնվել են ավելի բարձր եւ ջնջված գներ, ինչն, իբր թե վկայում է գների իջեցման մասին: Ցավով պետք է նշել, որ սա բացառիկ երեւույթ չէ: Խաբեության կամ մանր խորամանկության մեկ այլ տարբերակ է, այսպես կոչված, «մինչեւ 20 (կամ 15, 25) տոկոս զեղչ» հասկացությունը: Երբ փորձում ես ձեռք բերել քեզ անհրաժեշտ ապրանքը, պարզվում է, որ այն զեղչված է ընդամենը 5 տոկոսով: Չէ՞ որ դա եւս «մինչեւ 20 տոկոսի» մեջ է մտնում:

Եվս մեկ տարբերակ հաճախորդին զեղչով խաբելու: Խանութի վրա, հատկապես որտեղ թանկարժեք եւ ոչ բոլորին հասանելի ապրանքատեսակներ են վաճառվում, մեծ թվերով գրվում է «60 տոկոս զեղչ»: Մտածում ես, եթե այստեղ կոստյումն արժե, ենթադրենք 200 հազար դրամ, ապա կարելի է օգտվել առիթից եւ գնել 80 հազար դրամով: Սակայն պարզվում է, որ 60 տոկոս զեղչը կիրառվում է միայն խանութի տեսականուց մեկի, օրինակ, տաբատների կամ վերնաշապիկների վրա:

Այդուհանդերձ, զեղչերի լայնածավալ կիրառումը խոսում է մեզ մոտ բիզնեսի ավելի քաղաքակիրթ ձեւեր ընդունելու, բիզնեսի եւ սպառողի շահերը զուգորդելու ավանդույթների ստեղծման մասին: Ֆինանսատնտեսական ճգնաժամը եւս, բացասական լուրջ հետեւանքներով հանդերձ, իր ազդեցությունն է թողնում այս ավանդույթի ձեւավորման վրա:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**


«ՖԼՈՐԵՍ» ԱՃՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնելու է «ԱՌԷՔՍԻՄԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1. Բնակարան՝ 83.04 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Խաղաղ Դոնի փ., 31 շ., բն. 25: Մեկնարկային գինը՝ 19.400.000 դրամ:
2. Բնակարան՝ 78,8 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Հ/Ա Բ-2 թաղ., 135 շ., բն. 34: Մեկնարկային գինը՝ 20,000,000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ՝ հոլանդական եղանակներով 02.07.2009-ից մինչեւ 30.12.2009թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ. 13.00-ից, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-52-28 կամ 56-31-15:

www.
azg.am

ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ /ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ/
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ
ՀՀ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ
«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ,
Բաղրամյան 24դ, 54-24-81


## ԾԱՆՈՒՑՈՒՄ


United Nations Development Programme

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-21/09/SSA**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը «Օժանդակություն նախնական եւ միջին մասնագիտական կրթության համակարգին» ծրագրի շրջանակներում հայտարարում է ազգային փորձագետի մրցույթ՝ **հանրային ֆինանսական համակարգի կառավարման եւ վերլուծման մասնագետ՝ լրացուցիչ եկամուտների ստեղծման մոդելի մշակման համար**, նախնական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման /ՄԿՈՒ/հաստատությունների համար (Հայաստանի 12 պիլոտային ՄԿՈՒ քոլեջների օրինակով):

Մանրամասն տեղեկություններին կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետից (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ **http://www.undp.am/?page=Jobs** եւ **www.vet.am** ինտերնետային կայքերից: Դիմումը կարելի է հանձնել պահակակետում կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** կայքում: Այն պետք է ընդգրկի ինքնակենսագրություն (CV), դիպլոմների/հավաստագրերի պատճեններ, ուղեկցող նամակ:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հունիսի 10, ժամը 18:00:

***Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները***
***Կանանց մասնակցությունը խրախուսվում է***
***ՄԱԿ/ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակում ծխելն արգելված է***

United Nations Development Programme

**Vacancy Announcement -20/09/SSA**

The United Nations Development Programme in Armenia in the framework of National UNV Scheme under UNV Programme in Armenia Project invites applications from qualified and experienced national experts for **National Consultant on UNV Programme in Armenia.**

Please visit **http://www.undp.am/?pages=jobs** website to obtain full **Terms of Reference**, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan Str.

A complete application form should consist of CV and motivation letter. Incomplete applications will not be considered.

**Application deadline:** 11 June 2009, 18:00

***Only sort listed applicants will be contacted***
***Women candidates are encouraged to apply***
***UNDP / UN House is a non-smoking environment***

**ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

1 սենյականոց բն. Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածում: Ընդհանուր մակ. 35,4 ք. մ.: Գինը 9 մլն 500 հազ. դրամ: ***Հեռ. 72-87-88:***

FUND FOR ARMENIAN RELIEF

**Գիտական մրցույթի հրավեր (ANSEF)**

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի կողմից 2001թ. հիմնադրված Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ) Հայաստանի Հանրապետության գիտնականներին եւ հետազոտողներին հրավիրում է 2010 թ. գիտական դրամաշնորհի մրցույթի:

Յուրաքանչյուր դրամաշնորհի չափը մինչեւ 5000 ԱՄՆ դոլար է: Գիտական դրամաշնորհի մրցույթի մասնակիցների դիմումներն ընդունվում են էլեկտրոնային փոստով մինչեւ 2009 թ. օգոստոսի 31-ը: Հաղթողները կհայտարարվեն 2009 թ. դեկտեմբերի վերջին:

Յուրաքանչյուր դիմումատու դիմումը կարող է լրացնել անմիջապես ԳԿՀԱՀ-ի ինտերնետային կայքում: Էլեկտրոնային համակարգը թույլ է տալիս դիմումատուին խմբագրել եւ փոփոխություններ կատարել իր դիմումի փաթեթում մինչեւ մրցույթի վերջնաժամկետը:

ԳԿՀԱՀ դիմումի լրացման պահանջներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ԳԿՀԱՀ պորտալ (ANSEF portal) հետեւյալ ինտերնետային կայքի միջոցով՝ www.ansef.org, ապա SUBMIT GRANT ենթաբաժինը:

*ՀՕՖ-ի լրատվական կենտրոն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60


Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: